№ 37 ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19 № 37

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., իննը ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

«Արշալոյս»-ի գրաշարները յայտնում են տպագրական գործի աշխատաւորներին, որ ուրբաթ, փետրվարի 17-ին, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանվեց իրանց անմոռանալի ընկեր՝

ՀԱՅՐԱՊԵՏ ԲԱԲՈՒՐԵԱՆՑԸ

Թաղումը տեղի կունենայ, կիրակի, փետրվարի 19-ին. յուղարկաւորութիւնը կը սկսվի առաւօտեան ժամը 10-ից, Գանօվսկայա փող. № 17, դէպի Ջգրաշէնի ս. Աւետաց եկեղեցին, իսկ այնտեղից Վերայի գերեզմանատունը։ (շ.կ.) 2—2

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնից

Ի նկատի ունելով պ. գեներալ-նահանգապետի պահանջը՝ ներկայացնել դռնապան թէ ունեցող և թէ չունեցող տանտէրերի ցուցակները, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտնում է պ. պ. տանտէրերին, կառավարիչներին և տների կապալառուներին, որ այդ ցուցակները ներկայացվելու են այս յայտարարութեան օրից հինգ օր յետոյ, ուստի և վարչութիւնը իր պարտքն է համարում յիշեցնել այն տանտէրերին, կառավարիչներին ու կապալառուներին, որոնք դեռ չունեն թաղային լիազօրների ձեռքով ցուցակագրված դռնապաններ, պէտք է շտապեն կատարելու պ. գեներալ-նահանգապետի պարտադիր որոշումը՝ սպառնացող տուգանքից ազատ մնալու համար։

Ծանօթութիւն. Դռնապանների հարցին վերաբերեալ բոլոր տեղեկութիւնների համար պէտք է դիմել թաղային լիազօրներին կամ քաղաքային վարչութեան (շինարարական բաժանմունքում, քաղաքը մաքրելու բաժին)։

ԼԻԱԶՕՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԱՍՑԷՆԵՐԸ.

1 ք. մ.—Մ. Ն. Աթաբէկով (Գրիբոյեդովսկայա, № 23), 2 ք. մ.—Ի. Ի. Թերզիբաշեվ (Ճաւճաւաձեվսկայա, № 16), Տ. Ս. Տէր-Սիմոնեանց (Մթացմինդսկայա, № 1), Դ. Ի. Եակիմովիչ (2-րդ Պարալլելնայա. № 12), Ե. Դ. Կոտակեշիշով (Սուդեբնայա, № 34), 3 ք. մ.—Գ. Դ. Տէր-Նիկողոսով (Գրաֆսկայա, № 7), 4. ք. մ.—Ի. Ի. Մարգարով (Գանօվսկայա, № 23), 5 ք. մ.—Ա. Պ. Զախմախչեանց, (Արխիվնի պեր. № 12), 6. ք. մ.—Եգիզարով Հուսէյին-բէկ (Վորոնցովսկայա, սեփ. տ.), Գ. Ն. Բեժոյեվ (Վորոնցովսկայա, № 109), 7 ք. մ.—Բժ. Իգիթեան Ի. Ս., (Հալաբար, քաղաքային հիւանդանոց), 8 ք. մ.—Գ. Տոյիձէ, (Գօնչարնայա փող. № 28), 9 ք. մ.—Ն. Ս. Գրիկուրով (Միխայլովսկայա, № 37), Լ. Ա. Մամուլով (Ռազեզժայա, սեփ. տ.), 10 ք. մ.—Ի. Ի. Բրօն-ֆօն-Բրեններ (Միխայլովսկայա, № 161), և Դ. Ի. Էմինով (Միխայլովսկայա, № 160.)

Նախալովկա,—Խէչօ Խօջայեվ (Աննենսկայա և Ռոստովսկայա փող. անկիւն, մոլոկանների գերեզմանատան մօտ), Ա. Բակրաձէ (Ստավրոպոլսկայա, սեփ. տ. № 5)։

1—2

ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

յայտարարում է, որ 2-րդ կիսամեակի ուսման վարձը պէտք է վճարվի, համաձայն ուսումնարանի կանոնադրութեան, մինչև մարտի 1-ը։

Կիրակի, փետրվարի 19-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային Դումայի դահլիճում կայանալու է

Թիֆլիսի Հայոց Բարեգործական ընկերութեան

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Քննվելու են հետևեալ հարցերը.
1) Ընկերութեան հին կանոնադրութեան վերահաստատումը։
2) Վարչութեան անդամների թւի աւելացումը։
3) Ընկերութեան անշարժ կայքերի շահագործումը։ (հ.կ.) 2—2

ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԵՒ ՉՈՒԳՈՒՆԻ ՁՈՒԼԱՐԱՆ
Ի. Ս. ՌՈՒԿՍԻ

Այս տարվայ փետրվարի 1-ից վերանորոգեց իր գործողութիւնը։ Գործարանի պահեստում կան չուգունի ձուլվածքներ, ջրմուղի ֆասօնական մասը և զանազան ջրաղացի պատկանելիութիւն։ Պատուէրներով խնդրում եմ դիմել՝ Тифлисъ, Великокняжеская ул. д. № 49, հեռախօս № 556։
4—4 (հ.կ.) Կապալառու՝ Ա. Դ. Խորին

ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ԿԱՐԳԵՐ
ԲԱԶԱԶԽԱՆԻ ՄՕՏ
(Манташевскіе ряды)
ԵՐԿԱԹԱՎԱՃԱՌԻ ԽԱՆՈՒԹ
Դաւիթ Եսայեան Առաքելեանցի

Յայտարարում եմ ի գիտութիւն յարգելի ժողովրդին և իմ պ. պ. կլիենտներին՝ թէ Թիֆլիսի և թէ օտար քաղաքների, որ իմ խանութները, որոնք կային թէ Թուրքերի Մեյդանում և թէ Սալդատսկի բազարում, ես անցեալ տարվայ նոյեմբերի 22-ից փոխադրել եմ մի նոր տեղ, մի ընդարձակ խանութ Բազազխանի մօտ, Մանթաշեանցի նոր շինութեան մէջ, և դրա համար էլ յայտարարում եմ, որ այն բաց հաշիւները, որոնք վերաբերում են իմ վերոյիշեալ դադարեցրած խանութներին, պէտք է մաքրվեն իմ նոր խանութում։ Յուսով եմ, որ բոլոր իմ կլիենտները չեն թողնի իմ նոր խանութը առանց ուշադրութեան։
8—10 (հ. կ.) Յարգանօք՝ Դ. Ե. Առաքելեանց

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ I-ին քաղաքամասում, Մեծ և Փոքր Սուդեբնայա փողոցների անկիւնում, յատուկ շինված նոր շինութեան մէջ, ենթադրվում է բաց անել Ն. Ե. Զուբալովի նուիրաբերած դրամագլխով

«ՉՔԱՒՈՐՆԵՐԻ ՏՈՒՆ»

իբրև ապաստարան աղքատ քրիստոնեաների, արական սեռից, զուրկ իրանց ապրուստը ձեռք բերելու ընդունակութիւնից, երեսուն մահճակալով. տասնական մահճակալ հետևեալ դաւանութիւնների անձանց համար—ուղղափառ, հռոմէական-կաթոլիկ և հայ-լուսաւորչական։ «Չքաւորների տունը» մտնել ցանկացողները դիմում են խնդիրներով Թիֆլիսի քաղաքային վարչութեան, ներկայացնելով դոկումենտներ իրանց անձնաւորութեան, դաւանութեան, աղքատութեան մասին։ Չքաւորների ընդունելութեան մասին եղած խնդիրները կընդունվեն միայն մինչև 1906 թւի ապրիլի 1-ը։ (կ) 1—3

Պ. ԵՍ. ԱՒՍԱՐԿԻՍՕՎԻ
ԱՅԳՈՒ ԾԱՌԵՐԻ
ՏՆԿԱՐԱՆ

ծախվում են պտղատու ծառեր արտասահմանեան, ռուսական և կովկասեան տեսակներ։ Հասցէն՝ ст. Скра Зак. Жел. Дор. Авсаркисову. Ցուցակը ուղարկվում է ձրիաբար։
5—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սահմանից այն կողմը. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Մամուլ. Ռուսաստանի մահմեդականների թաթարացնելը. Հայ Թուրքական համաժողովը և Թուրք մամուլը. Կռուող ազգերի բաժանման խնդրի շուրջը. Թուրք-հայկական համագումարի առիթով. Կեանքի ապահովութիւնը և քաղաքականութիւնը. Տեղեկութիւններ գաւառից. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպա և Հայաստան.

ՍԱՀՄԱՆԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

III

Առանձին ուշադրութեան արժանի դէպքեր տեղի ունեն ներկայումս Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանագծի վրա։

Մեր ստացած նորագոյն տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ օսմանեան զօրքերը անցել են պարսկական սահմանը և իրապէս գրաւել պարսկական մի քանի գաւառակներ։

Պարսկական իշխանութիւնը և զօրքը չեն դիմել պատերազմական գործողութիւնների և առ այժմ սպասողական դիրք են բռնել, յետ նահանջելով սահմանագծից դէպի երկրի ներսը։

Պարսիկները դեռ չեն կորցրել իրանց յոյսը, որ Թիւրքիայի քաղաքագէտները խելացի կը գտնվեն և նորից յետ կը կանչեն իրանց զօրքերի այն վաշտերը, որոնք անցել են սահմանը։

Բայց գործը կարող է և ուրիշ արտայայտութիւն ստանալ՝ յարաբերութիւնները աւելի ևս կը լարվեն և պատերազմը կը դառնայ անխուսափելի։

Պէտք է նկատել, որ պարսկական սահմանագծի երկարութեամբ ապրող պարսկահպատակ քիւրդ տարրը յաճախ երկդիմի դեր է կատարել։ Նա ամեն ժամանակ միատեսակ հաւատարիմ չէ մնացել Պարսկաստանին և երբ տեսել է իր մերձաւոր շահերը վտանգված, դաւաճանել է իր պետութեան և անցել է օսմանեան զօրքի կողմը մինչև որ հանգամանքները թելադրել են ուրիշ քաղաքականութիւն։

Սահմանակից նահանգներում պարսկահպատակ քիւրդերը կարող են պատերազմական դաշտ դուրս բերել աւելի քան 50,000 հեծեալներ իրանց զէնքերով և հետևակ կռւողների մի զինուորութիւն մօտ 25,000 հոգի։ Բայց այդ պատկառելի թւից միայն մի փոքր մասը ծանօթ է կանօնաւոր զինուորական վարժութիւններին և ընդունակ է սիստեմայով կռիւ մղելու հակառակորդների դէմ։

Քիւրդերը պատկանում են սիւննի աղանդին և ուրեմն կրօնական զգացմունքներով աւելի մօտ են օսմաններին, սակայն նրանք իրանց գործողութիւնների մէջ սակաւ դէպքերում են ղեկավարվել զուտ կրօնական տեսակէտով, այլ աւելի գնահատել են իրանց աշիրաթների կենսական պահանջները և ժամանակակից շահերը։

Բայց պէտք է ընդգծել, որ քիւրդերը վերջին երկու տասնեակ տարիներում սկսեցին աւելի մօտենալ օսմաններին շնորհիւ այն առանձին հովանաւորող քաղաքականութեան, որ սկսեց նրանց վերաբերութեամբ գործադրել Կ. Պօլսի կառավարութիւնը, որը ծրագրեց քիւրդերի համար արտօնեալ դիրք և յատուկ զինուորական «համիդիական» կազմակերպութիւն։ Քիւրդերի մէջ օսմանեան գործակալները թէև դեռ չեն գտել կատարեալ աջողութիւն, բայց և այնպէս կարողացել են որսալ նրանց համակրութիւնները։

Սակայն պարսկական քիւրդերը միշտ գնահատել են իրանց բացառիկ կիսանկախ դրութիւնը Պարսկաստանում և չեն ցանկացել ենթարկվել Բօսֆորի այն հրամաններին, որոնք պարտաւորական են եղել նրանց թիւրքահպատակ ազգակիցների համար։

Այժմ պարսկահպատակ քիւրդերը տատանման մէջ են և թէև համակրութիւն են ցոյց տալիս դէպի օսմանեան զօրքի աջողութիւնները, բայց դեռ վերջնականապէս չեն որոշել իրանց մերձաւոր քաղաքականութիւնը։

Հարց է ծագում թէ ինչ բնաւորութիւն ունի օսմանեան զօրքի առաջխաղացութիւնը։ Հետևանք է նա արդեօք զուտ օսմանեան քաղաքականութեան, թէ՞ թելադրված է Գերմանիայի, Անգլիայի կամ մի որ և է ուրիշ պետութեան քաղաքականութեամբ

Պէտք է աչքի առաջ ունենալ, որ վաղուց Բարձր Դուռը աշխատում է ենթարկել Պարսկաստանը իր քաղաքական նպատակներին և ծառայեցնել քաղաքական ընդարձակ ծրագիրների իրագործութեան։ Այդպէս օրինակ Բ. Դուռը մի քանի տարիներ շարունակ ձգտում էր Պարսկաստանի հետ որոշ պայմաններով դաշնակցութիւն կապել Թիւրքիայի գերագոյն ղեկավարութեամբ։ Բայց Պարսկաստանը առհասարակ խուսափում էր դաշնակցութիւններից և չափազանց ներգործական քաղաքականութիւնից. Նա աշխատում էր իր ձեռքերը ազատ պահել և այդ ձևով ապահովել իր քաղաքական անկախութիւնը, մինչև որ բաւականաչափ կամրանար և կուժեղանար աւելի վճռական քաղաքական քայլեր անելու համար։

Թիւրքիան անկասկած չէ մոռացել իր ծրագիրները և նա այժմ էլ ձգտում է Պարսկաստանը գցել իր ծրագիրների անիւի մէջ։ Եւ գուցէ նա այժմ մտադիր է զօրքի ույժով իրագործել տալ այն, ինչ որ անաջող եղաւ դիւանագիտական բանակցութիւնների միջոցով։

Կարելի է անել և մի քանի ուրիշ ենթադրութիւններ։ Օրինակ, Գերմանիայի համար շատ կարևոր է ապահովել իր օգտին այն բոլոր շրջանները, որոնք մօտ են Բաղդադի երկաթուղու գծին և յամենայն դէպս հեռացնել ասպարէզից ամեն մի մրցութիւն, որ կարող էր հանդէս բերել մի ուրիշ պետութիւն, դիցուք Ռուսաստանը, եթէ սա ցանկանար Ատրպատականից շարժվել դէպի Պարսից ծոցը։

Կարելի էր ենթադրել նոյնպէս, որ թիւրքական զօրքերի շարժումը նպատակ ունի իսկապէս օսմանեան զէնքի պատիւը բարձրացնել մի նոր թէկուզ աննշան նուաճումներով և բարձրացնելու օսմանեան գահի նշանակութիւնը մահմեդական աշխարհում։ Կարելի էր ենթադրել, թէ օսմանեան շարժումը կատարվում է, որպէս զի Թիւրքիայի համար ևս ապահոված լինի ազդեցութեան որոշ շրջան, եթէ հարցեր կը ծագեն որոշելու եւրոպական պետութիւնների ազդեցութեան շրջանները Իրանի զանազան մասերում։

Ներկայումս պատերազմական եռանդուն գործողութիւններ տեղի ունենալ չեն կարող թիւրք-պարսկական սահմանագծի վրա, որովհետև սարերում դեռ ցուրտ է և ձիւն է նստած մեծ շերտերով. բայց մի 40 օրից յետոյ, մարտի վերջին և ապրիլի սկզբներին, գարունը արդէն բաց արած կը լինի ճանապարհները արշաւանքների համար։

Մենք չենք կասկածում, որ եւրոպական պետութիւնները անուշադիր չեն դէպի այն դէպքերը, որոնք տեղի են ունեցել և պատրաստվում են թիւրք-պարսկական սահմանագծի վրա և կաշխատեն ազդել եղելութիւնների վրա։ Եւ մերձաւոր ապագան ցոյց կը տայ թէ ինչ դիրք կը բռնեն նրանք ներկայ ընդհարման մէջ։

Անշուշտ թիւրք-պարսկական յարաբերութիւնների լարվելը և պատերազմի վտանգը առանձին նշանակութիւն ունեն և հայերի համար, թէ այն պատճառով, որ սահմանագծի շրջանում և մերձաւոր գաւառներում ապրում են հայեր և թէ այն, որ ամեն մի սուր և խոշոր շարժում օսմանների և պարսիկների մէջ արձագանք են գտել իրանց մասսաների խաւերում և դիպել են նաև հայերին փոքր ու մեծ չափով։

Դա առանձին ուշադրութեան արժանի և կարօտ մի հանգամանք է։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաղանիս գիւղ, Ղազախի գաւառ, փետրվարի 15-ին

Ամսիս 11-ին մեր հայ գիւղացիները հաւաքած զէնքերը Ղազախ տարան կառավարութեանը յանձնելու։ Յանձնած զէնքերը այրում են։ Կոթի գիւղից երկու անյայտացրած մարդկանց թուրքերը Ղազախով տանելիս՝ մի ռուս տիկին նկատում է և իսկոյն իմաց տալիս գնդապետ պ. Լեվիցկուն և աղաչում է, որ հայերին ազատէ, որն ուղարկում է զինուորներ և հրամայում է թէ հայերին և թէ թուրքերին բանտարկել, որ յետոյ քննէ և ամենախիստ կերպով յանցաւորներին պատժէ։

Գնդապետ Լեվիցկու հրամանով գաղթած թուրքերը իրանց գիւղերն են վերադառնում, միայն Բաղանիս այրումը չը պէտք է վերադառնայ։ Ինչպէս և անցեալ անգամին գրել եմ, սրանք ամբողջ գաւառի հայերի և թուրքերի համար պատիժ են, սրանց գլխաւոր զբաղմունքը մարդասպանութիւնն է և գողութիւնը։ Որպէս զի ապագայումն էլ անմեղ արիւն չը թափվի, գիւղացու ընտանիքը պահող, 100 րուբլի արժէցող եզը մի կաշուի կամ մսի համար չը մորթվի, կալուածատէրերը խնդրել են պ. գաւառապետին, որ այրումներին թոյլ չը տայ նորից հաւաքվելու։ Պ. Ռէնտը յարգեց խնդիրը և հրամայեց, որ իւրաքանչիւրը, ուր տեղագրված է, այնտեղ գնա և արքունական հարկերը վճարէ։

Ամեն ազգի մէջ էլ խեղճ, անչառ մարդիկ կան, որոնք ոչ միայն ուրիշի աշխատանքի վրա աչք ունեն, այլ և շնորհակալ կը լինեն, որ թողնեն իրանց արիւն-քրտինքով աշխատածը ուտել. կան այսպիսիները և թուրքերի մէջ. թշուառ է սրանց վիճակը. սրանք աւելի հարստահարված են, խաղալիք դարձած աղէտ և ֆանատիկ բէկերի, աղաների և մոլլաների ձեռքին. արիւն-արտասուքով պատմում են իրանց կրած դառնութիւնները. մէկը գանգատվում է, թէ տասն ոչխարից վեցը մորթել են, երկրորդը՝ թէ մէկ կով ունէր, այն էլ մորթեցին, երրորդը՝ կինն են փախցրել և այլն. անողները թուրքերն են։

Վերադառնում են և թուրք աքսիբարացիք. երբ սրանք իրանց գիւղի սահմանին մօտենում են, հող են վերցնում և երեսին քսում՝ ասելով. «Փառք Ալլահին, որ մեր հողին արժան եղանք»։ Թուրք եղբայրներ, մտէք և դուք հայերի դրութեան մէջ, իմացէք, որ ամենքի համար էլ դժուար է թողնել տուն, տեղ, հարստութիւն։

Նոյն գիւղի թուրքերը պատմում են, որ 8000-ից աւելի ձիաւոր զինված թուրքեր էին եկել. եկել էր և Բորչալուի գաւառի Հասան-աղա Եգիզարովը։

Խառնակութիւնների ժամանակ թուրքերը անցել էին Կուր գետը և իշխան Գօլիցինի կալուածքի անտառները կտրատել, որի համար կառավարութիւնը տուգանք առաւ Շխլուից 8000 ր., Սալահլուից՝ 12,000, ասում են, որ Քալամանից էլ առնելու են 30,000 րուբլի։ Կօզակները պատմում էին, որ թուրքերը մտադիր էին տուգանքը չը տալ, բայց երբ սկսեցին գիւղի ծայրից վառել, իսկոյն սեղանի վրա դարսեցին։

Մելքիսեդեկ քահանայ

—

Երևանի նահանգապետը փետրվ. 16-ին Կովկասեան Փոխարքային հետևեալ յայտարարութիւնն ուղարկեց.

Յունվարի լոյս 31-ի գիշերը թուրքերից կազմված զինված աւազակախումբը յարձակվեց երկաթուղու տնակի վրա, որը գտնվում է Հին-Նախիջևանից 6 վերստ հեռաւորութեան վրա՝ դէպի Ջուլֆա նոր շինւող երկաթուղու ճանապարհի վրա։

Կրակելով վերոյիշեալ տնակը, որի մէջ բնակվում էին 21 բանւոր, և ձեռքից վիրաւորելով նրանցից Պապիկ Ֆանգեալ-օղլի անունով մէկին, չարագործները պահանջեցին նրանցից փող և գոյք. բանւորները կատարեցին նրանց պահանջը, բացի մէկ բանւորից՝ Օլիմպիյ Բիկով անունով, որը հակառակվեց և այդ պատճառով վիրաւորվեց։

Տեղեկանալով այդ մասին՝ Նախիջևանի գաւառապետը մանրամասնօրէն հարց ու փորձ արեց կողոպտվածներին, որից յետոյ ոստիկանապետ Ֆլօրենսկու, մի խումբ ստրաժնիկների և զօրքի հետ միասին գնաց թուրքերի Կօշա-Դիզա գիւղը, ուր փետրվարի 2-ին, լուսադէմին, խուզարկութիւններ կատարեց և բացի 5 զանազան սիստեմի հրացաններից, նախնական քննութիւնը ոչինչ չէ պարզել։ Այնուհետև խուզարկել են թուրքի Բուլղան գիւղը՝ տասը կողոպտված բանւորների ներկայութեամբ, որի ժամանակ բուլղանցի քիւրդ Հաջի-Մամէդ Վալի-Ղուլի-օղլու թէյատան կտուրի վրա գտնված են 2 վերմակ, երկաթուղու բուլէտա, կօշիկներ, շորերի մի մասը և ուրիշ շատ իրեր։ Բանւորները ճանաչեցին այդ իրերը։ Թէյատան տէրը փորձեց հեռանալ Նախիջևանի կայարանից մեկնող գնացքով, բայց ձերբակալեցին նրան. Նոյն օրը ձերբակալեցին նաև Թազաքենդ գիւղի բնակիչ Ասադ Ֆարադ-օղլուն և պարսկահպատակներ Ալի-Աղա-օղլուն և Հուսէյին Ալի-օղլուն. վերջին երեքին ներկայացնելով բանւորներին՝ ճանաչված են իբրև կողոպուտին մասնակցողներ. բացի դրանից, գտնված են 3 չարագործներ, բուլղանեցիներ՝ Մաշերրամ Հասան-օղլի, Խալիլ Սուլէյման-օղլի և պարսկահպատակ Ալի, որի ազգանունը յայտնի չէ։ Նրանց ձերբակալելու համար ձեռք են առնված խիստ միջոցներ։ Կողոպտվածների ասելով, նրանցից գողացել են 2,100 րուբ. փող և զանազան իրեր՝ 300 րուբ. արժողութեամբ։

—

Կովկասի Փոխարքան ստացել է հետևեալ հեռագիրը.

Գանձակ, 16 փետրվարի։ Ռոտմիստր Էֆենդիեվը Աննենֆելդից հաղորդեց. «Փետրվարի 15-ին գիշերը Մօրուլ գիւղին մօտիկ հրացանաձգութիւն ունեցայ մի խումբ աւազակների հետ, որոնցից երկուսը սպանված են։ Խլել ենք 8 ձի և 2 հրացան. էսկադրօնը կորուստ չէ ունեցել»։

Ալյֆտան

—

Փետրվարի 14-ին Դաստաֆուրի հասարակութեան թուրքական գիւղից հրացանաձգութիւն սկսեցին մօտիկից անցնող ռուս պահակների վրա։ Գաւառապետը պահանջելէ մի հարիւրեակ կօզակներ այդ յանցագործ գիւղի վրա էկզեկուցիա նշանակելու համար։ Ասում են, դա արդէն հինգերորդ դէպքն է, որ թուրքերը զինված դիմադրութիւն են ցոյց տալիս կառավարական իշխանութեանը, այնուամենայնիւ այդ դէպքերը իշխանաւորները չեն ձևակերպել։ Քննիչ Մօնինը արդէն սկսել է քննել վերոյիշեալ գործերը։

«Нов. Об.»

—

Գանձակի նահանգի Կարեագինօ ռուսական գիւղից հաղորդում են. յունվարի 23-ին Աղալի գիւղի բնակիչներ Հուսէյին Հաջի-Ֆարզալի օղլի և ուրիշները, թւով 20 հոգուց աւելի, գալով Հուսէյինբէկլի գիւղը, պահանջեցին նոյն գիւղի բնակիչներ Ջէբրայիլ Քերբալայ-Զաֆար օղլու ձին և հրացանը, բացատրելով այդ պահանջը նրանով, որ մտադիր են գնալ Զանգեզուրի գաւառը հայերի դէմ կռւելու։ Մերժում ստանալով, աղալիցիների մի մասը ներս խուժեց Ջէբրայիլի տունը, ույժով վերցրեց մի քանի իրեր և բերդանի հրացանը, իսկ միւս մասը սկսեց հրացանաձգութիւն։ Հուսէյինբէկլի գիւղի բնակիչներն էլ իրանց կողմից սկսեցին հրացանաձգութիւն աղալիցիների վրա և կատաղի կռիւը տևեց մինչև ուշ երեկոյ։ Այդ հրացանաձգութեան ժամանակ ծանր կերպով վիրաւորվեց աղալիցի Հուսէյին Ֆարզալի օղլին։

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Կովկասի Փոխարքան ստացել է հետևեալ հեռագիրը.

Ալպանի, 15 փետրվարի։ Պատիւ ունեմ զեկուցանելու Ձերդ Պայծառափայլութեան, որ, լիովին գոհ մնալով Քութայիսի գաւառի ազգաբնակութիւնից իմ բոլոր պահանջները կատարելու համար, երեկ դրագունների հետ ճանապարհվեցի Լէչխումի գաւառը և այսօր հասայ Ալպանի։ Թէ այստեղ և թէ ճանապարհին գիւղական հասարակութիւնները դիմաւորում էին աղ ու հացով և հոգևորականութիւնը եկեղեցական զգեստաւորութեամբ, ողջոյն էին յայտնում և խնդրում էին խնայել։ Հարկերը ամբողջապէս վճարված են, զէնքերը բերում յանձնում են սայլերով, ագիտատորներին և փախստական զինուորներին մեզ են տալիս. կալուածատէրերից շատերը բաւարարութիւն են ստացել։ Ազգաբնակութիւնը համոզվեց, որ դժբաղդութիւն է ունեցել հաւատալու չարագործներին, և բոլորովին անկեղծութեամբ խոստացաւ համախմբվել հէնց իրանց շահերի համար՝ մաքառելու նրանց դէմ և բոլոր վտանգաւոր անդամներին իրանց միջից մեկուսացնելու։ Զինուորական կոչումը, չնայելով ժողովրդի ջերմ պատրաստակամութեան, մի քանի դժուարութիւնների է հանդիպում, որովհետև գաւառական վարչութեան բոլոր մատեանները ոչնչացրված են։ Գոհութեամբ հաղորդում եմ, որ Լէչխումի գաւառը իմս վրա լաւ տպաւորութիւն թողեց։ Թիֆլիսցիների բատալիօնը կատարեալ կարգապահ վիճակի մէջ է։

Հրդեհների մասին եղած լուրերն այնքան ստայօդ են, որ, ազգաբնակութեան վկայութեամբ, նոյն իսկ գաւառում մի դէպք անգամ չէ եղել։

Գեներալ-մայոր Ալիխանով

—

Քութայիսի փոխ-նահանգապետ Դադեշկելիանին, որը զօրքի հետ ուղարկված էր Ռաճա-Լէչխումի կողմը, վերադարձաւ. ինչպէս երևում է՝ Ռաճա-Լէչխումում, համեմատած Վրաստանի միւս մասերի հետ, գործը աւելի հանգիստ է վերջացել, թէպէտ այստեղ էլ կրակն ու խառնաշփոթութիւնը անխուսափելի է եղել։

—

Քութայիսի ոստիկանապետ է նշանակվել Մոզդոկի կօզակ ոստիկանապետը։

—

Քութայիսի բանտում նստած քաղաքական յանցաւորների գործի քննութեան համար նշանակված է յատուկ յանձնաժողով, որին մասնակցում են Քութայիսի քաղաքացիական նահանգապետ Օսէցկին, փոխ-նահանգապետ Դադեշկելեանի, մի քանի օր նահանգապետ եղած յայտնի պրինցը, դատախազի օգնական Մալինովսկին և զինուորական ժանդարմերիայ ներկայացուցիչը։ Մասնաժողովն արդէն ձեռնարկել է գործի քննութեան։

—

Հաստատ աղբիւրներից տեղեկացանք, որ կրակից փչացած շէնքերի տէրերին ապահովագրական ընկերութիւնները հատուցանելու են կրած վնասները։ Երկար ժամանակ այս խնդիրը չափազանց կասկածելի էր։

—

Փետրվարի 14-ին, առաւօտեան 5—6 ժամին Կազակօվի փողոցում սպանել են գուրիացի Խիմշիաշվիլուն և Քութայիսի դերձակ Չխեիձէին։ Սպանվածներն ապրում էին Պուշկինեան փողոցում, Դոկիէլօվի տանը, որտեղից կօզակները նրանց դուրս են բերել և տարել, յայտնի չէ, թէ որտեղ։ Սպանվածներն այլանդակված են նաև սրերով։

—

Քութայիսում ամեն գիշեր խուզարկութիւններ են տեղի ունենում յատկապէս զէնք գտնելու նպատակով. բայց եթէ այդ խուզարկութեան ժամանակ պատահեցին այնպիսի բաներ, որոնց ոչ միայն գրպանով տանելը, այլ և տներում պահելն է արգելված ներկայ ժամանակների օրէնքով—օրինակ դրամը, գօտին, ժամացոյցը, գդալներ և այլ արժէքաւոր իրեր, բոլորովին անյայտանում են։

—

Քութայիսի փողոցներում բացի ոստիկաններից և յատուկ վարձված պահապաններից շրջում են նաև կօզակներ՝ «խաղաղութիւն պահպանելու համար»։ Այն ինչ խաղաղութիւնը ոչ միայն գիշերով, այլ և ցերեկով անգամ գոյութիւն չունի։ Միանգամայն աներկիւղ թալանում են և խլում ինչ որ փոքր ի շատէ արժէք ունի։ Ամեն ոք տեսնում է այս բոլորը, բայց լռում..., որովհետև պաշտօնապէս յայտարարված է, որ զօրքի շնորհիւ Քութայիսումը խաղաղութիւնը վերականգնած է։

—

Քութայիսի նահանգապետն ու քաղաքացիական գործերի նահանգական վարչութիւնը թոյլ չեն տուել ընդհանուր, հաւասար և գաղտնի քուէարկութեամբ քաղաքային իրաւասուների ընտրութիւնը և հրամայել են ընտրութիւնները կատարել հին օրէնքներով. ընտրական ցուցակներ պատրաստելու գործը յանձնվել է քարտուղարի պաշտօնակատար պ. Աւալիանուն. ընտրութիւնները տեղի կունենան առաջիկայ յունիս ամսին։ (Ցն. Փ.)

ՄԱՄՈՒԼ

—

«Մուրճ» ամսագրի № 1 յունվարի համարում Լ. Ս. «Ներքին տեսութեան» մէջ խօսելով ռուսական ներկայ իրականութեան հրատապ կողմերի մասին, գրում է հետևեալը, որը կարելի է մի կերպ նրա քաղաքական-հասարակական դաւանանքը համարել. «Մենք հաւատում ենք, որ միայն սահմանադրական կեանքում, այն էլ աստիճանաբար կատարված ռէֆօրմներով, կարող է հասունանալ սօցիալական յեղաշրջումը, որ պէտք է հետևանք լինի հասարակութեան տնտեսական կազմուածքի փոփոխութեան և մասսայի գիտակից ինքնորոշման։ Ամենօրեայ դիտողութիւնը և առաջադէմ երկրների անցեալի ուսումնասիրութիւնը ցոյց են տալիս, որ հասարակական կեանքում դասակարգերի անտագօնիզմի (հակամարտ) հետ դեր են կատարում նաև դասակարգերի գործակցութիւնը, պայքարող հակառակ ույժերի խաղաղ կօմպրօմիսը»։ Իսկ անդրադառնալով օրվայ խլխող հարցին, մասնակցե՞լ Դումայի ընտրութիւններին թէ ոչ, գտնում է որ կառավարութիւնը՝ պատճառ այս յետադիմական և տերրօրական քաօսային դրութեան, կարելի է միայն չէզօքացնել մի միջոցով—որ բոլոր ընդդիմադիր տարրերը մի բլօկ, խիտ և ուժեղ բլօկ կազմած՝ դիմեն դէպի ընտրութիւնները։ Արտաքին տեսութեան մէջ, ամսագիրը իբրև հաստատութիւն իր «Ներքին տեսութեան» բաժնում արտայայտած մտքերին, ցոյց է տալիս, որ սահմանադրական երկրներում դեմօկրատացումը գնում է հետզհետէ առաջ խաղաղ քայլերով, առանց խոշոր ցնցումների։ Իսկ Թիւրքահայ հարցը կարող է միայն լուծվել այն ժամանակ, երբ եւրոպական կառավարութիւնները իրանց գլուխ կանգնեն դեմօկրատ տարրերը, և երբ դեմօկրատական հոսանքը Եւրոպայում կը լինի տիրապետող։

*

Որքան մեծ բարիք կը լինէր երկու կողմերի համար էլ, եթէ Թիւրք կառավարութիւնը կռուէր իր հայ հպատակների հետ կուլտուրական միջոցներով, առաջադիմական մրցութիւններով։ Թիւրքահայերը Թիւրք կեանքի բազմաթիւ ասպարէզների վրա ազդել են շատ բարերար կերպով. օսմանցիներին տուել են քաղաքական, հասարակական, գրական ակնյայտնի գործիչներ, տուել են պրոֆէսօրներ և այլ մտաւորական կեանքի ղեկավարներ։ Այժմ Կ. Պօլսի «Բիւզանդիոն» թերթը արձանագրում է մի այլ շատ հետաքրքիր փաստ, որը մի աւելորդ անգամ էլ ապացուցանում է, որ եթէ օսմանցիները թողնեն իրանց անմիտ հալածանքները հայերի դէմ, ապահովեն նրանց կեանքի, գոյքի, պատուի անձեռնմխելիութիւնը—այդ փրկարար կը լինի ոչ միայն հայ ժողովրդի, այլ այն կառավարութեան համար, որն իր ձեռքի մէջ ունի նրա ճակատագիրը։ Ահա թէ ինչ են գրում նոյն թերթին Զմիւռնիայից.

Մեր Թիւրք հայրենակիցներէն քանի մը զարգացեալ անձեր մտադրութիւն ունին մասսայ սերնդեան համար մանկապարտէզ մը հաստատել ի մօտոյ։ Կառավարական ատեանքին գործոց քարտուղար Մէհմէտ պէյ և «Իրամէթ» լրագրոյ խմբագիր Հիւսէյին պէյ տեղւոյս Կրթասիրաց Մանկապարտէզին այցելեցին վարժարանին ծրագրին՝ կազմակերպութեան և գործածուած առարկայից տեղեկանալու համար։ Տնօրէնուհի Տիկնայք և Տօքթ. Թէրզեան և Մ. Գալիպճեան էֆէնտիները մեծ յարգանօք ընդունեցին այցելուները, և պէտք եղած տեղեկութիւնները տուին ու խոստացան հարկ եղած օժանդակութիւնը չզլանալ։ Պէյերն իրենց եղած ընդունելութենէն և հաղորդուած տեղեկութիւններէն շատ գոհ մնացին և իրենց տպաւորութիւնները մասնաւոր տետրակին մէջ արձանագրեցին։ Տեղւոյս Կրթասիրաց Մանկապարտէզը տիպար և օրինակելի հաստատութիւն մը կրնայ համարուիլ։ Կլսենք թէ հաստատուելիք Մանկապարտէզին հիմնադիրք (Թիւրքերի մասին է խօսք) շէնքը վարձած, գործի սկսած և Կ. Պօլսէն կարող հայ մանկապարտիզպանուհի մը հրաւիրած են»։

Թիւրք կառավարութիւնը եթէ մի քիչ բարի կամեցողութիւն, բարեացակամ ուշադրութիւն ցոյց տայ Զմիւռնիայում ինչպէս ամբողջ երկրում կը գտնէ այնպէս, ոչ թէ քանդումի գործիչներ, ռումբեր, այլ մանկապարտէզներ և հայ մանկապարտէզպանուհիներ, որոնք կը շէնացնեն բարբարոս Թիւրքերին։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԹԱԹԱՐԱՑՆԵԼԸ

—

«Русь» թերթում (№ 4), «Պատգամաւորների խումբը» հաւաքական կեղծանունով ստորագրողները մեղադրում են ինձ նրա համար, որ «Нов. Время»-ի մէջ տպագրված «Պանիսլամիզմը Ռուսաստանում» յօդուածում (№ № 10,718 և 10,727) ես գրպարտել եմ Ռուսաստանի մուսուլմաններին Ռուսաստանից անջատվելու ձգտումներ վերագրելով և, վախեցնելով «բոլորին ինչ որ ժուպէլ-պանիսլամիզմի մտքից», նպաստեցի այն բանին, որ Պետերբուրգում նորերս հաւաքված մուսուլմանների համագումարի կայանալուն կառավարութիւնը թոյլ չը տուեց։

Որքան յայտնի է ինձ, այդ համագումարը, թէև չը թոյլատրվեց, այնուամենայնիւ իրապէս կայացաւ և բոլորովին բարեյաջող կերպով վերջացաւ՝ մի ամբողջ շարք որոշումներով։

Ինչ վերաբերում է իմ յօդուածին, նա իսկապէս համագումարի հետ շատ հեռաւոր առնչութիւն ունի և յամենայն դէպս ոչ ես, որ գրել եմ այն, ոչ խմբագրութիւնը, որ տպագրել է նրան, ոչ մի ցանկութիւն չենք ունեցել խանգարել և խոչնդոտ լինել մի որ և է բանում համագումարին։ Իմանալով, որ նրա թոյլտուութեան համար ինչ որ խոչնդոտներ կան, ես գրեցի, իսկ խմբագրութիւնը տպագրեց այդ նկատողութիւնը («Нов. Вр.» № 10,721), որի մէջ զարմանք է արտայայտվում թէ ինչու կառավարչական իշխանութիւնները համագումարը չեն թոյլատրում։ Ես խորապէս համոզված եմ, որ ռուսաց պետութեան շահը պահանջում է հնարաւորութիւն տալ իր հպատակ այլացեղ ազգերին բացարձակ, հրապարակօրէն և օրինական ճանապարհով քննել իրանց գործերը, արտայայտել ամբողջ երկրի ռուս-հասարակութեան առաջ իրանց կարիքները, պահանջները և ցանկութիւնները, մի և նոյն ժամանակ ես համոզված եմ նոյնպէս, որ ռուսաց կառավարութիւնը, ռուս հասարակութիւնը և ռուսաց մամուլը ոչ միայն իրաւունք ունեն, այլ և պարտաւոր են ուշադրութեամբ հետևել այն ամենին, ինչ որ կատարվում է կայսրութեան այլացեղ ազգութիւնների մէջ, ի հարկէ, աչքի առաջ ունենալով և պաշտպանելով նախ և առաջ ռուսաց պետութեան շահերը։ Լռութեամբ անցնել այնպիսի հարցերի մօտից, ինչպիսին պանիսլամիզմի զարգացման հարցն է Ռուսաստանում, անուշադիր թողնել, լռութեան տալ նրանց, ոչ կառավարութիւնը, ոչ հասարակութիւնը, ոչ ռուսական մամուլը չեն կարող, չը պէտք է անեն, իրաւունք չունեն։ Պանիսլամիզմի հարցը Ռուսաստանի մուսուլմանների մէջ նոր չէ և նրան առաջ բերողը ես չեմ եղել։ Նա բաւականաչափ ընդարձակ գրականութիւն ունի և մի և նոյն ժամանակ այդ գրականութեան ամենաէական մասի ծագումը ռուսական չէ, այլ թաթարա-մուսուլմանական։ Պարունակվում է նա այնպիսի մարդկանց աշխատութիւնների մէջ, որոնցից շատերը անմիջական և ամենագործնական մասնակցութիւն են ունեցել, ինչպէս անցած տարի օգոստոս ամսին Նօվգօրօդում, նոյնպէս և այս տարի Պետերբուրգում տեղի ունեցած մուսուլմանական համագումարներում։ Օրինակ, էլ ուրիշ ո՞վ պէտք է լինէր, բայց եթէ այդ համագումարներից առաջինի նախագահը, Ղրիմի թաթարների ներկայացուցիչ Գասպրինսկին, Բախչիսարայի թաթարական «Թարգման» թերթի հրատարակիչը, որը մօտաւորապէս տասը տարի է արդէն բացատրում է թէ ռուսաց և թէ թաթարական մամուլի մէջ, որ ամբողջ մուսուլման աշխարհի գլուխն է Թիւրքիան իր սուլթանով, որ համարվում է խալիֆ, այսինքն, ամբողջ իսլամի կրօնապետ, մարգարէի փոխանորդ, և որ ներկայումս ամբողջ մուսուլման աշխարհում կատարվում է մի շատ եռանդուն և ընդարձակ գործունէութիւն, պանիսլամիզմի քարոզը։ Էլ ուրիշ ո՞վքեր, բայց եթէ իրանց Ռուսաստանի մուսուլմանների ներկայացուցիչ անուանողները, որոնք ֆեդերալիստների նոյեմբերեան համագումարին Պետերբուրգում յայտնեցին, որ Բաքւում կազմակերպվել և շատ մեծ եռանդով գործում է թաթարական «Հէյրաթ» գաղտնի ընկերութիւնը, որի նպատակն է հնարաւորութեան չափ աշխատել անջատելու Ռուսաստանից Կովկասի աւելի մեծ մասը, որտեղ գերիշխող տարր է հանդիսանում մուսուլման ազգաբնակութիւնը։ Վերջապէս ինչ եմ ասում ու վկայում իմ յօդուածում յիշված և նրա ամբողջ էութիւնը կազմող այն կտորները, որ քաղել էի ես թաթարական «Հէյաթ» և տաճկական «Իճտիհատ» թերթերից։ Ես դեռ բաւականին մեղմացրել եմ պ. Իբրահիմօվի յօդուածից քաղած կտորները։ Մի և նոյն յօդուածի թարգմանութիւնը, որ կատարվել է Գիտութիւնների Ակադեմիայում, ուղղակի մի կատարեալ թունաւոր ծաղր է Ռուսաստանի հասցէին, նրա ներկայ թշուառութիւնների ու դժբախտութիւնների համար։ Այնտեղ արդէն խօսքը ոչ թէ հասարակ լուծողականի մասին է, որ Նապոլեոնն տուել է Ռուսաստանին, այլ թոյնի մասին, որ մնացրել է ռուսաց կառավարութեանը, բայց առ այժմ թողել է կենդանի ռուս ժողովրդին, որի դէմ էլ մուսուլմաններին կոչ է անվում կռւելու. հրապարակ գալ՝ առանց ժամանակ կորցնելու։ Օգտվելով իրանց լեզուի ոճի արևելեան ճոխութեամբ և ուրիշ առանձնայատկութիւններով, թաթարական հրապարակախօսները այնպէս են գրում, որ ամեն մի թարգմանիչ թարգմանում է նրանց ըստ իր հասկացողութեան, բայց և այնպէս, ինչպէս էլ որ թարգմանելու լինենք պ. Իբրահիմօվի յօդուածը, այդ այն է, որ Ռուսաստանի հասցէին մի մեծ վատութիւն է պարունակում, որը, նամանաւանդ, արտայայտվում է իբրև կարծիք Վոլգայի մասերում ապրող թաթարների բարձր խաւերի։ «Մեր նպատակների համար, ասում են նրանք, հարկաւոր է որ մենք կառավարութեան թոյլտուութեամբ հիմնենք մի ընկերութիւն, որը արտաքուստ համարվի և գիտութիւններ տարածող ընկերութիւն, ունենայ իր թերթը և շատ ուրիշ օգտակար բաներ, պատրաստէ գործունեայ մարդիկ, որովհետև առանց այդպիսիների մենք չենք կարող կռիւ մղել։ Այդ նպատակի համար անհրաժեշտ է, որ մենք որ և է պատրուակով կազմակերպենք մի ընկերութիւն և նախապատրաստենք ժողովրդին կառավարութեան դէմ կռիւ մղելու համար»։

Ահա հէնց այդ թաթարներն են, որ Ռուսաստանի մուսուլմանների համեմատաբար աւելի զարգացած և շարժական մասը լինելով, մեր այլացեղ տարրերի մէջ դէպի իսլամիզմ տանող զգալի շարժման գլուխն են անցել։ Վերցրէք նրանց կեանքը և կենցաղավարութիւնը վերջին ժամանակներս ուսումնասիրողներից որին ուզում էք (Իլմինսկուն, Զինչերինին, Միրօպոլեւին և այլն), վերցրէք իսլամի պատմութեան մասին գրված այնպիսի երևելի աշխատութիւններ, ինչպէս պ. Չերեվանսկու գիրքն է, դուք ամեն տեղ էլ կը գտնէք վկայութիւններ պանիսլամիզմի քարոզչութեան մասին ոչ միայն Ռուսաստանում, այլ և միւս պետութիւնների մէջ, ու կը համոզվէք, որ մեզանում, Ռուսաստանում, պանիսլամիզմի քարոզիչները գլխաւորապէս թաթարներն են։ 1889 թւին ինձ վիճակված էր մի առ ժամանակ ծառայել կիրգիզների տափաստաններում, իսկ յետոյ էլ մասնակցել Թուրքեստանի երկիրը կառավարելու համար օրէնքներ մշակելու գործին։ Այդ ժամանակ կիրգիզները անուանում էին մուսուլման համարվում, բայց իրօք մուսուլման չէին։ Բայց այժմ, ընդհանուրի վկայութեամբ, այդ կողմից նրանց այլևս անկարելի է ճանաչել, մինչ այն աստիճան նրանք, շնորհիւ թաթարների և թաթարական մոլլաների գործադրած ճնշման, թաթարացել, մուսուլմանացել են։

Սակայն այդ հանգամանքը չէ արգելում ոչ կիրգիզներին, ոչ էլ միևնոյն պայմանների մէջ ընկած բաշկիրներին չը սիրել թաթարներին և աշխատել պաշտպանել նրանց ազգութիւնը։

Կոմս Իգնատիևի նախագահութեամբ այլադաւանների կրօնական գործերի համար հաստատված առանձին խորհուրդը ստացել է Ռուսաստանի մուսուլմաններից 500-ի չափ խնդիրներ, միջնորդութիւններ, պետիցիաներ և այլն։ Նրանց քննելը յանձնված էր պետական խորհրդի անդամ Չերևանսկուն, որը և իր կողմից ներկայացրել է խորհրդին մի ընդարձակ գրութիւն մուսուլման-սիւննիների կրօնի գործերի վերաբերեալ։ Նրանից պարզ երևում է, որ մուսուլմանների պետիցիաների ահագին մեծամասնութիւնը ստանում է իր ծագումը առ հասարակ Օրէնբուրգեան մուֆտիութեան սահմանների մէջ ապրող թաթարներից։ Բնորոշը այն է, որ այդ միջնորդութիւնների հիմնական միտքը միևնոյնն է. ամենայն ինչ հոգևորականութեան համար և ամեն բան էլ ստանալ նրանից և այլ ոչ ուրիշ ոչ ոքից։ «Այդ տեսակ դրութեան վարիանտները, ասում է պ. Չերեվանսկին, բազմաթիւ չեն և, որ առաջին ուշադրութիւնն է գրաւում իր վրա, առաջ է գալիս իսլամական այնպիսի ազգութիւններից, որոնք դեռ ևս բոլորովին չեն խմորված մոլլաների սխօլաստիքայով, ինչպէս օրինակ կիրգիզ—կայսակները կամ թէ դեռ ևս իրանց ազգութեան ծագման առանձնութիւնը պահպանող բաշկիրները, որոնք ֆին ու թուրք ցեղերի խառնուրդից են սերվել։ Այդ հանգամանքը անպատճառ պէտք է աչքի առաջ ունենալ կրօնի վերաբերեալ գործերի կառավարութեան և կառավարիչներ նշանակելու հարցը քննելու ժամանակ։ Մատուցված նմուշներից տարբեր վարիանտները ոչ միայն չեն խուսափում կուլտուրական գիտելիքներից, այլ և իրանք են խնդրում օգնել իրանց ազգի համայնքների մտաւոր հորիզոնը ընդարձակելու»։ Կիրգիզները, օրինակ, խնդրում են իրանց համար տալ թաթարներից առանձին կրօնական գործերի վարչութիւն և մուֆտի, որն ընտրվէր կիրգիզների միջից, բարձրագոյն կամ միջնակարգ կրթութիւն ստացած մի անձ, թէկուզ նոյն իսկ զուրկ լինի նա մուսուլմանական աստուածաբանութեան բարձր գիտելիքներից։ Նրա պարտականութիւնը պէտք է լինի, ասում են խնդրամատոյց եղողները, զարգացնել ժողովրդի հոգևոր և մտաւորական վիճակը, բայց միայն լաւ ուղղութեամբ, «մարդասիրութեան, առանց ազգերի ու կրօնի խտրութեան, մի և նոյն ժամանակ նա պարտաւոր է ոչնչացնել մուսուլմանական ֆանատիզմի վնասակար երևոյթները և կեանքի մէջ գործադրել տալ սեռի հաւասարութեան սկզբունքը և յարգանք ներշնչել դէպի կնոջ անձնաւորութիւնը և նրա ազատութիւնը»։

Թաթարների ձգտումները և ուզածները բոլորովին ուրիշ բաներ են։ Ես արդէն ասել եմ, որ թաթարները իրանց ոյժին մեծ նշանակութիւն տալու նպատակով հաւատացնում են, որ իրանց թիւը Ռուսաստանում 20 միլիոնից նոյն իսկ աւելի է։ Մինչդեռ մուսուլմանների բոլոր թիւը մեզանում 16 միլիոնից աւելի չէ, որոնցից մօտաւորապէս 4 միլիոնը թաթարներ են, 3½ մլ. կիրգիզներ, 2 միլիոնը սարդեր և ուզբեկներ, 1½ միլիոնը բաշկիրներ, կէս միլիոնը չուվաշներ։ Լինելով Ռուսաստանի մուսուլման ազգաբնակութեան միմիայն քառորդ մասը, թաթարները, վաղուց է որ աշխատում են համախմբվել և ենթարկել իրանց ազդեցութեան Ռուսաստանի միւս բոլոր մուսուլմաններին։ Դրա ամենաիրական միջոցը նրանց պահանջներին բաւարարութիւն տալն է, հիմնելով Ուֆիայում կամ Օրէնբուրգում մեծ մուֆտիութեան նման մի բան, որը, ինչպէս արդարացի կերպով նկատում է պ. Չերեվանսկին, իր իրաւասութեան տակ կունենար մի այնպիսի ահագին տարածութիւն, որի նմանը չունեն ոչ եպիսկոպոսները, ոչ միտրոպոլիտները, ոչ էլ նոյն իսկ քրիստոնէական եկեղեցիների պատրիարքները։ Յայտնելով իր կարծիքը այն բոլորի դէմ, որը կարող է պատճառ դառնալ ռուսաց պետութեան մէջ մի առանձնացած թաթարո-մուսուլմանական թագաւորութիւն ստեղծվելուն և ապագայումն էլ կը նպաստէր կիրգիզների, բաշկիրների և ուրիշ ազգութիւնների թաթարացնելուն, պ. Չերեվանսկին հանդիսանում է իբրև կուսակից գոհացումներ տալու Ռուսաստանի մուսուլման ազգաբնակութեան այն բոլոր իսկական կարիքներին և պահանջներին, որոնք հակառակ չեն ռուսաց պետութեան շահերին։ Այդպիսիները քիչ չեն կուտակվել և ի հարկէ նրանց պէտք է բաւարարութիւն տալ հնարաւորութեան չափ ընդարձակ կերպով։ Բայց այդ հայեցակէտը չէ կարող գոհացնել այնպիսի մարդկանց, որոնք, ինչպէս ասաց մուսուլմանների համագումարին մասնակցող մի յայտնի ներկայացուցիչ, «նպատակ են դրել կազմակերպել անկախ մուսուլմանական ժողովրդական կուսակցութիւն», և ուստի ամենևին չը պէտք է զարմանալ, որ համագումարը իրան յատուկ չափազանց բնորոշ յանդգնութեամբ որոշեց խնդրել կոմս Իգնատիևին և պ. Չերեվանսկուն վերադարձնել իրան (կարծես նրանք իրանից էին ստացել) մինիստրական կոմիտէի և Բարձրագոյն անունով մուսուլմաններից ստացված բոլոր պետիցիաները և միջնորդութիւնները։ Նրանք պէտք է քննվեն Բաքւում, որը քիչ է մնացել որ Ռուսաստանի մուսուլմանական շարժման գլխաւոր կենտրոնատեղին դառնայ, այնտեղ կազմակերպված վերոյիշեալ թաթարական «Հէյրաթ» ընկերութեան բիւրօյում, որը վերաքննելով այդ պետիցիաները, կը մշակէ Ռուսաստանի «մուսուլման ժողովուրդի» ընդհանուր բաղձանքների ծրագիրը այն ուղղութեամբ, որը ցանկալի է ի հարկէ թաթարներին և նրանց հոգևորականութեանը։

Մուսուլմանական համագումարի պատգամաւորները, օգուտ քաղելով, որ Պետերբուրգ են եկել, Ռուսաստանի մուսուլմանների դաշինքը կնքեցին սահմանադրական-ռամկավար կուսակցութեան հետ, որի ծրագիրը, ինչպէս յայտնի է, սեպարատիզմի ձգտող այլազգիների համար շատ յարմար է։ Բայց մի՞թէ մենք, ռուսներս, որ չենք պատկանում Ռուսաստանի քայքայման և բաժանման կուսակիցների թւին, ունենալով մեր առաջ ռուսական մուսուլմանների թաթար մասի պանիսլամական ակնյայտնի ձգտումները, տեսնելով նրանց համախմբելու ու միացնելու ցանկութիւնները՝ համառուսական մի մեծ մուֆտիութիւն հիմնելու համար, ի մի ձուլելով թաթարներին, և ուրիշ օտար ցեղերին, ռուսաց պետութեան մէջ մի առանձին մուսուլմանական ազգ, «մուսուլմանական ժողովրդական կուսակցութիւն», մուսուլմանական թագաւորութիւն ստեղծելու նպատակով, կարո՞ղ ենք կամ իրաւունք ունե՞նք լռութիւն պահպանել։ «Нов. Вр.»

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԸ

I

Փոխարքայի նախագահութեամբ փետրվարի 20-ին կը գումարվի հայ-թուրքական համաժողովը, որ պէտք է քննէ թէ ինչ միջոցներով կարելի է միանգամայն վերջ դնել երկու ժողովուրդների անմիտ թշնամութեանը։

Ինչպէս յայտնի է, համաժողովը նշանակված էր փետրվարի 15-ին, բայց մահմեդականները վերջին րօպէին պահանջած լինելով իրանց պատգամաւորներին որոշել ընտրութիւններով, որպէս հայերը, համաժողովի բացումը յետաձգվեց 20-ին։

Բայց ինչ պիտի ծնի այդ լեռը—ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Հայ թուրքական մասսաների արիւնոտ մեհենամարտից յետոյ, երևի մենք հանդիսատես պիտի լինենք հայ-թուրքական ինտելիգենցիայի հռետօրական մենամարտին։

Գոնէ այդպէս է տրամադրանում հասարակական կարծիքը։ Որովհետև հայ-թուրքական ընդհարումները սկզբում առաջ եկած գուցէ—ասում ենք գուցէ՝ կանգնելու համար ադմինիստրացիայի տեսակէտի վրա—երկու կողմերի մի խելագար շարժումից, անկասկած չէին առնույ այդ ծաւալը, եթէ իշխանութիւնները հաւատարիմ իրանց էական ու տարրական պարտականութիւններին, խեղդէին նրանց սաղմի մէջ։

Եւ այն ժամանակ ոչ կարիք կունենայինք ողբալու այսքան հսկայական աղէտների վրա, ոչ էլ գումարելու՝ համաժողով, որի խորհրդակցութիւններն ու որոշումները գուցէ ապարդիւն են, տրված լինելով այն հանգամանքը, որ համաժողովը օժտված չէ գործադիր իշխանութեան ոչ մի լիազօրութեամբ։

Ադմինիստրացիան այժմ, ըստ երևոյթին, չէ ցանկանում հայ-թուրքական ընդհարում և արդէն երկիրը համեմատաբար խաղաղվել է։

Թող շարունակէ չուզել և խաղաղութիւնը վերջնականապէս կը վերահաստատվի։

Ահա ինչ նկատումներով հասարակական կարծիքը մեծ բան չէ ակնկալում այդ համաժողովից։

Համաժողովի հիմնական օգտակարութեան մասին սկեպտիկ լինելով հանդերձ, կարելի է սակայն ուրախանալ, որ մի տարի ամբողջ միմեանց կոտորելուց, թալանելուց, հրդեհելուց յետոյ, երկու դժբաղդ ժողովուրդների ներկայացուցիչները առիթ են ունենում իրար հետ շփվելու, իրար հասկանալու և եղբայրութեան ձեռք մեկնելու։

Բայց հետաքրքիր է նախ, թէ ինչ տրամադրութիւններով են գալիս մահմեդական պատգամաւորները։ Պ. Աղայեվը իր «Իրշադ»-ում, երկու առաջնորդող է նուիրում համաժողովին և շեշտելով նրա կարևորութիւնը ասում է.

Հարցը մեծ է և կարևոր։ Մեր ազգի ապագան կախված է այն բանից, թէ ինչ բնաւորութիւն կունենայ այդ ժողովը և ինչ գործ կը կատարէ։ Մի ամբողջ տարի է որ հայ-մահմեդական (գործ է ածված հայ-մահմեդական և ոչ հայ-թուրքական բառը) աղէտները մեր գլխին բերեցին անկարելի բաներ։ Չափ ու սահմանից անցան կեանքի և գոյքի վնասները։ Մեր ազգը, մեր հասարակութիւնը իր ամբողջ ժամանակը, ուշադրութիւնը, ջանքն ու աշխատանքը այդ գործերին նուիրելով՝ մոռացութեան տուեց իր միւս բոլոր պահանջները։ Սակայն և այնպէս յայտնի չէ, թէ երբ և ինչպէս կազատվենք այդ դրութիւնից, այդ վիճակից։ Ո՛չ ոք ապահով չէ վաղվայ մասին, ոչ ոք չգիտէ թէ էգուց, այս երեկոյեան և կամ գուցէ այս կէսօրից յետոյ ինչ պիտի պատահի, որտեղից գլուխ պիտի բարձրացնէ կրակը, ընդհարումը, կեանքեր զոհելու, ինչքեր ու տներ աւերելու համար։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

(Շարունակութիւն)

—

Եթէ մեր Անդրկովկասում շարունակվի ներկայի դժնդակ քաօսը, եթէ ծայրագաւառային ազգութիւններին իրար դէմ հանելու՝ Թիւրքիայից փոխ առած արիւնոտ սիստեմը յաղթանակէ, եթէ Ռուսաստանը դժբախտութիւն ունենայ պարգևելու Կովկասին մի որ և է նոր Պօլիցին համապատասխան հրահանգներով և լիազօրութիւններով, այն ժամանակ, ի հարկէ, հայկական ազգային ինքնապաշտպանութեան աւերիչ աշխատանքը՝ բարոյական աջակցութիւն գտնելով Եւրոպայի բոլոր ազգերի կողմից,—իսկ վաղ թէ ուշ որ և մէկը այդ հզօր ազգերից անշուշտ իրան համար ձեռնտու և օգտաւէտ կը համարէ բարոյական համակրանքը փոխելու նիւթական աջակցութեան,—ահա այդ դէպքում, ես ասում եմ, հայկական յեղափոխութեան աւերիչ թափին ու եռանդը անպայման դատապարտված են անցնելու Արաքսն և հաստատվելու Տիգրի ափերում։ 1905 թւականի ձմեռը ցոյց տուեց մեզ այդ բանի մէջ իր առաջին նշան—ծաղիկները, որոնք, ուղիղ է, անխնայ կերպով հնձվեցին կօզակների սրերով, բայց բանն այն է, որ ժողովրդական հրդեհները չէ կարելի հանգցնել արիւնով, և ուր եղել են ծաղիկներ, այնտեղ կը լինեն և պտուղներ, իսկ պտուղ հաւաքելը ամենևին այն չէ, ինչ որ ծաղիկ հնձելը։ Եւ այն տխուր հանգամանքի մէջ, որ Հայկական Լեռնադաշտի արնաշաղախ հողից սպանական կերպարանքով կը բուսնեն կարմիր տանջանքի ցաւոտ ծաղիկներ և հասունացած վրէժխնդրութեան արնագոյն պտուղներ, ռուս կառավարութիւնը, բացի իրանից, չէ կարող ոչ ոքի մեղադրել։ Ամեն մի համբերութիւն վերջ ունի և ով, ինչպէս ասում է ռուսաց առածը, քամի է ցանում, նա կը հնձէ փոթորիկ։ Եւ սակայն թէ իր ներքին միտումներով և թէ արտաքին նպատակներով հայ էմիգրանտների այն գործունէութիւնը, որ արտայայտվում է «Pro Armenia» խօսքերով և որ կատարվում ու խմբվում է նոյն անունը կրող թերթի շուրջը, մինչև այժմ սկզբունքով ոչ միայն չէ եղել հակառուսական, այլ և ոչ մի ջանք չէ խնայել միշտ անխզելի պահելու և ամրապնդելու իր համար ռուսական կապերն ու համակրանքը։

Հայկական հարցի սուր կերպարանք ստանալը մեր ծանր օրերում և ա՛յն խորին դայրոյթը, որ ծնեցնում են Կովկասից հասած լուրերը, նամակներն և լրագրական տեղեկութիւնները, դրդեցին ինձ մի քանի յօդուած գրելու այն բանի մասին, թէ եւրոպական հասարակութիւնը ինչ ու ինչ է արել, անում է կամ մտադիր է անելու, որպէս զի այդ թշուառացող ժողովրդի համար հաստատվի որ և է քաղաքական կարգի նման մի բան, կարգ, որ կարողանար պաշտպանել մարդկային անձնաւորութիւնն և բարեկեցութիւնը։

Դէպքից օգտւում եմ քաղում յայտնելու իմ խորին շնորհակալութիւնս բոլոր այն անձերին, որոնք նիւթեր մատակարարեցին ինձ հայկական մարտիրոսագրութեան քաղաքական ուսումնասիրութեան համար և նրանց հետ միասին ու ամենից առաջ բժ. Ի. Զ. Լօրիս-Մելիքեանին, «Pro Armenia»-յի այդ անխոնջ աշխատաւորին, որ լուսաբանեց ինձ համար հարցի բազմաթիւ մութ կէտերը վառվռուն հայրենասէրի խոր անկեղծութեամբ և իսկական եւրոպացու գեղեցիկ անաչառութեամբ։

—

Հայկական հարցը Եւրոպայի առաջ պաշտօնապէս դրվեց միայն ռուս-թիւրքական պատերազմից յետոյ՝ Բերլինի դաշնագրի զօրութեամբ, որ իր 61-րորդ յօդուածով խոստանում էր տալ Թիւրքահայերին մի քանի տարրական բարեփոխութիւններ։ Որքան էլ ժլատ էին եւրոպական վեց պետութիւնների երաշխաւորութեամբ վկայագրված այդ խոստումները, այնուամենայնիւ նրանք կարծես յարութիւն տուին թիւրքական լծի տակ տանջված ու մաշված հայ ժողովրդին և արծարծեցին նրա մէջ մոռացված լաւագոյն ապագայի յոյսեր։ Բայց... քիչ կան պատմութեան մէջ աւելի վիրաւորական, աւելի անգութ և աւելի ստորացուցիչ հիասթափութեան դէպքեր, քան այն, որ բաժին ընկաւ հայկական յոյսերին։ Փոքրիկ, սահմանափակ բարեկարգութիւնների փոխարէն, որոնք սպասվում էին Բերլինի դաշնագրի համարեա անփութօրէն նետված 61-րորդ յօդուածից, նա, այդ յօդուածը, առաջ բերեց հայ ժողովրդի համար անսպասելի տառապանքներ, որոնք թերևս գերազանցեցին անցած դարերի թշուառութիւնները, երբ հայը հեծում ու մաշվում էր մահմեդական աշխարհի ճնշման դէմ մղած պայքարի մէջ իր գոյութեան իրաւունքի համար։ Ես մտադիր չեմ պատմելու ab ovo հայերի պատմութիւնը։ Չէ՞ որ հարկաւոր կը լինէր սկսել ասուր-բաբելական դարերից։ Կը յիշեցնեմ միայն, որ հայերը քրիստոնէական քաղաքակրթութեան ամենահին ազգն են և Ասիայում մահմեդական պետութիւնների հիմնվելուց յետոյ՝ նրանք բնականաբար առաջապահ և պատուար են մահմեդական մոլեռանդութեան արշաւանքի դէմ այդ քաղաքակրթութեան վրա։ Անցկացնելով դարեր ծանր պատերազմական դրութեան մէջ, զոհ դարձած բազմատեսակ ազգային և կրօնական հալածանքների, հայ ժողովուրդը բնականաբար պէտք է մեծ հատուածներ առաջ բերէր իրանից դէպի Եւրոպայի և Ասիայի զանազան երկիրները։ Հայաստանի բնիկ ազգաբնակութիւնը խաղաղ, առաւելապէս երկրագործ, արհեստի հակամէտ և առևտրի ընդունակ մի տարր է։ Երկար դարերի պայքարը մահմեդականների մոլեռանդութեան դէմ կռել-կոփել է նրան և կազմել նրանից մի մեծ բարոյական ոյժ։ Նրա կրօնական և ազգային անզիջողող դիմացկանութիւնը ողողված է արեան գետերով։

Բաժանվելով Ընդհանրական Ժողովից, հայ լուսաւորչական եկեղեցին, առանձնացած բիւզանդական և լատինական քրիստոնէութիւնից, սերտ դաշն կապեց ազգի հետ և դարձաւ մի տեսակ նրա պատմական նշանաբանը։ Քրիստոնէութիւնը Հայաստանում, պաշարված ամեն կողմից մահմեդականութեան մրրկածուփ ովկիանոսով, երկար դարերի ընթացքում քաղաքակրթութեան դրօշակ էր և առաջադիմութեան փարոս։ Այս պատճառով էլ երբ հայ ժողովուրդը շփվեց Մոսկվայի քրիստոնեայ թագաւորութեան հետ (XVII-դ), յարեց նրան, ինչպէս հարազատի, իր բոլոր համակրանքներով։ Երեք հարիւր տարվայ ընթացքում հայ ժողովուրդը անփոփոխ կարապետ և [illegible] հանդիսացաւ ռուսական ազդեցութեան Կովկասում։ Ռուս թագաւորները շատ լաւ հասկանում էին այդ բարոյական միութեան օգուտը և շատ անգամ աշխատում էին հաստատել և ամրապնդել նրա կապը իրանց երախտագիտական արտայայտութիւններով։ Ռուսական քաղաքակրթութիւնը հայերն ընդունում էին ամենայն պատրաստակամութեամբ։ Հայկական ընտանիքներում երեխաներին դեռ օրօրոցից սովորեցնում էին ռուս լեզուն. հայը իր սրբազան պարտքն էր համարում մօտենալ ու բարեկամանալ ռուս հասարակութեան հետ, պարծենում էր ռուսի նման ապրել իմանալու եղանակով, ռուսական սովորութիւնների և բարքերի գիտութեամբ, ռուսական ինքնաեռով և ռուսերէն խօսելով։

Թիւրքահայերը նախանձով էին նայում անդրկովկասեան հայերի վրա և երազում էին մի բան միայն—տեսնել իրանց նոյն պայմանների մէջ։ Վերջին ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ հայ ազգաբնակութիւնը, հոգևորականների առաջնորդութեամբ, դիմաւորում էր ռուս զօրքերին խաչով ու խաչվառով։ Ռուսաց զօրքը քայլում էր դէպի իր փոքրասիական յաղթութիւնները մի երկրով, որ լռելեայն յարձակողական դաշն էր կապել նրա հետ։ Հայ ինտելլիգենցիան չէր զատում իրան ռուսականից, և ինչպէս ամբողջի մի մասը՝ գնում էր նրա բոլոր հոսանքների հետ, հանդէս բերելով և առաջնակարգ մարդիկ և յետադէմներ,—ազատամիտներ և կղերականներ, յեղափոխականներ և աստիճանաւորներ, խաղաղութեան անձնատուր անձինք և գեներալներ, սահմանադրականներ և ինքնակալութեան սիրահար բիւրօկրատներ, նոյն իսկ մինիստրներ, ինչպէս Դելեանովը, և դիկտատոր, ինչպէս Մ. Տ. Լօրիս-Մելիքովը։

Հայ գրականութիւնը կատարում էր իր կուլտուրական-կրթական աշխատանքը համարեա բացառապէս ռուս օրինաչափ գրականութեան միջոցներով՝ կամ թարգմանելով ռուս կլասսիկների գրուածքները, կամ փոխադրելով նրանց ու վերածելով այնպիսի ձևերի, որոնք յարմարվում են տեղական կեանքի պայմաններին։ Ես գրականապէս պնդում եմ, առանց վախենալու հերքումներից, որ մինչև իննսունական թւականները հայ հասարակական կեանքի հոսանքում, նրա որ ճիւղն ու որ ընթացքն էլ վերցնելու լինէք, չէ եղել սեպարատիստական ձգտումների հետքն անգամ և հայ հասարակութիւնը չէր զատում-բաժանում իր բաղդը Ռուսաստանի և ռուս ժողովրդի բաղդից։ Ես աւելին կասեմ. մինչև անգամ Թիւրքիայում, չը նայելով զարհուրելի ճնշումներին, որոնց ենթարկված է հայ ժողովուրդը, նա այն ժամանակ գերադասում էր Բերլինի դաշնագրի որոշ յօդուածից բղխող յոյսը պայմանական և օդային երազներից մի ինչ-որ սեփական անկախ թագաւորութեան մասին։

Յետագայում, երբ միջազգային խաբուսիկ խոստումները օդը ցնդեցին, առաջ եկան ազգային խմբակներ և կազմակերպութիւններ, որոնք հռչակվեցին սեպարատիստական, բայց իսկապէս նրանց ձգտումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ ստանալ խոստացված բարեփոխութիւնները։ Այդպէս էր նոյն իսկ «Հնչակ» թերթի կուսակցութիւնը, մի թերթ, որ հրատարակվում էր Ժընէվում ռուս էմիգրանտների ազդեցութեան տակ և սօցիալիստական գունաւորութեամբ։ Հէնց նոյն ռուսական ազդեցութեան աղբիւրից էլ ծնունդ առաւ հայ դաշնակցական յեղափոխական կազմակերպութիւնը՝ նախաձեռնութեամբ Պետերբուրգի և Մօսկվայի համալսարանների նախկին ուսանողների։ Այստեղ, իբրև ուսանողներ, պաշտվում էին Տուրգենևը, Դօստոեվսկին և մանաւանդ Միխայլօվսկին։ Այսպէս ուրեմն, նոյն իսկ իրանց «յեղափոխութեան» մէջ հայերը չէին հեռանում ռուսական կուլտուրայի հիմունքից և մտցնում էին նրա ուսմունքները, որպէս իդէալներ, իրանց սեփական կեանքի մէջ։

Դաշնակցական այդ կազմակերպութիւնը մինչև անգամ իր ծրագրի մէջ չը մտցրեց սօցիալիստական ուսմունքների պաշտամունքը։ Գլխովին անձնատուր եղած Թիւրքահայերի պաշտպանութեան՝ նա իր գործունէութիւնը ցոյց էր տալիս բացառապէս նիւթական և բարոյական օգնութեամբ հայթայթելով կարօտ հայրենակիցներին։ Կուսակցութեան քաղաքական պահանջներն այնքան չափաւոր էին, որ 1896 թւականի նոյեմբերի 3-ին, մի հարցապնդումի ժամանակ հայկական գործերի վերաբերմամբ ֆրանսիական պալատում, Կօշէնը (D. Cochin), մի պահպանողական և կաթօլիկ պատգամաւոր, հնարաւոր համարեց բառ առ բառ կարդալ այդ յեղափոխականների ամբողջ ծրագիրը և պատգամաւորական ժողովը միաձայն ընդունեց նրան բաւարար։

Ռուսահայերի վրա, իբրև մեղք, բարդում էին այն հանգամանքը, որ նրանք անցնում են Թիւրքական սահմանը զինուորված օգնութիւն հասցնելու իրանց եղբայրներին և փրկելու նրանց կոտորածի վտանգից։ Այդ հայրենասիրական բռնկման հալածողները մոռանում էին սերբիական պատերազմը, ռուս կամաւորներին և Չերնեաեվին։

Ներկայումս հանգամանքները խիստ կերպով փոխվել են։ Ռուսաստանի և վրդովված հայ հասարակութեան մէջ բացված է մի լայն ու խոր վիհ։ Այդ անդունդը փորելու համար աշխատել է մի վարպետ, համարեա հանճարեղ ձեռք։ Պառակտումը Ռուսաստանի և հայութեան մէջ վրիժառութիւն է Թիւրքիայի կողմից այն պարտութեան համար, որ նա կրեց պատերազմի դաշտում՝ ընկճված ռուսաց զէնքի ոյժից, երբ, ազատելով սլաւոններին, ռուսները կանգ առան Կ. Պօլսի պատերի առաջ, և միաժամանակ հետևանք է Ռուսաստանի դիւանագիտական պարտութեան Բերլինի կոնգրէսում։ Պառակտման գլխաւոր կազմակերպողը ամենուրեք էր և դեռ մնում է—խելօք, փառասէր և շրջապատողների համար հմայիչ սուլթան Աբդիւլ-Համիդը, արևելեան բռնակալի մի տիպար՝ օժտված միջին դարերի բոլոր ձիրքերով և արատներով, մի մարդ, որին Գլադստոնն անուանում էր «Մեծ մարդասպան»։ Միայն ապագայի, և այն էլ գուցէ ոչ մօտաւոր ապագայի, պատմութեանը կը վիճակվի լուսաբանել այն խորամանկներս ցանցը, որով այդ թագակիր Մաքիավէլին, ոտքից մինչև գլուխ շաղախված մարդկային արեան մէջ, կարողանում էր խաբել և դեռ մինչև այժմ խաբում ու քթից բռնած ման է ածում եւրոպական պետութիւններին՝ հաստատելով իր բարեկեցութիւնը նրանց փոխադարձ երկիւղի և տարաձայնութիւնների վրա։

(Կը շարունակվի)

Հայ ազգը միևնոյն դրութեան մէջ է։

Եթէ այսպէս շարունակվի վեց ամիս, մի տարի էլ, ո՛չ նրանց և ո՛չ էլ մեզ մօտ ոյժ ու կարողութիւն կը մնայ։ Մեր չէն հայրենիքը աւերվելով՝ ո՛չ մի գործ առնելու, ո՛չ մի բան անելու զօրութիւն և ընդունակութիւն չը պիտի մնայ։ Անկասկած է, որ հետզհետէ երկու ազգերն էլ, միևնոյն կերպով, միևնոյն չափով վայրենանալով՝ գործերը այլ կերպարանք պիտի ստանան։

«Փոխարքայի, Շէյխ-ուլ-իսլամի, Մուֆթիի և Կաթողիկոսի ներկայութեամբ կարգադրված» ահա այս ժողովն է, նկատում է պ. Աղայեվ, որ կոչված է դարման գտնելու վերոյիշեալ դրութեան,

Մի այսպիսի մեծ, մի այսպիսի կարևոր խնդրի որքան աւելի ուշադրութեամբ և լրջութեամբ վերաբերվենք, դարձեալ քիչ է։

Մտածենք մանրամասնապէս այն բանի վրա, որ այս ժողովը նմանվելու չէ բնաւ միւս ժողովներին։ Ժողովին նախագահ պիտի լինի ինքը՝ Նորին Մեծութեան Կայսրի Փոխարքայ, և Կովկասի կառավարչապետ Նորին Պայծառափայլութիւն կոմս Վօրօնցօվ Դաշկօվ։ Ամբողջ Ռուսաստանի ուշադրութիւնը կենդրոնացած պէտք է լինի այդ ժողովի վրա։ Մամուլը, լրագիրները ժամ առ ժամ, րօպէ առ րօպէ այդ ժողովի խորհրդակցութեան, վիճաբանութիւնների, վճիռների մասին հեռագրներով, թղթակցութիւններով աշխարհին տեղեկութիւն պիտի տան իսկոյն։

Երկու ազգերի միջև պէտք է հաստատվի մի մեծ դատաստան։ Իւրաքանչիւրը պիտի աշխատի հակառակ կողմի յանցանքները, կատարած գործերը, ունեցած նպատակները մերկացնել, որպէս զի նրան մեղաւոր բռնելով պատիժ որոնէ։

Ահա այս տեսակ ժողովին առանց նախապատրաստվելու, կուրաբար գնալ չի՛ լինի։ Հարկաւոր է, որ գործի էութիւնը ամեն կողմերից քննելուց յետոյ միայն գործի սկսենք։ Մեր հայրերից և պապերից մեզ ժառանգ մնացած ծուլութեան և անփոյթութեան ժամանակը չէ... Պէտք է այժմեանից ժողովներ գումարենք և հայ-մահմեդական խնդիրը միայն քննութեան ենթարկելով՝ այժմեանից պատրաստվենք, իմանանք, թէ ի՛նչ պիտի ասենք, ի՛նչ պիտի անենք ժողովում։

Հետևաբար պէտք է նախ և առաջ իմանանք թէ ի՛նչ են մեր հակառակորդներ նպատակները ու երևակայութիւնները։

Փառք Աստուծոյ հայ մամուլը այդ նպատակներն ու երևակայութիւնները լոյսի պէս բաց է անում մեր առաջ։

Այդ նպատակները, այդ երևակայութիւնները բաղկացած են.

1) Նախ մեզ ամբաստանելով պանիսլամականութեան մէջ, ուզում են կառավարութեան, ամբողջ Ռուսաստանի և Եւրոպայի առաջ հաստատել, որ հայ-մահմեդական ընդհարումները դրանից ծագեցին։

Մնացեալի մասին յետոյ։

Ինչպէս կարելի է ենթադրել պ. Աղայեվի յօդուածից, մահմեդականները գալիս են համաժողովի ո՛չ թէ երկու ժողովուրդների մարտիրոսացման ցուցակին, յուզիչ ու իմաստութեան հրաւիրող ճիչը բերելու, գալիս են ո՛չ թէ երկու գազանացած հասարակութիւնների միջև մի modus vivendi—մի տեսակ համաձայնութիւն ստեղծելու յամառ ու անդրդուելի ցանկութեամբ, գալիս են ո՛չ թէ խօսելու միմեանց հետ սրտաբաց, սրտագին,—անկեղծ ու անսահման ցաւի արցունքը իրանց աչքերի մէջ, ու հաշտութեան, ամեն գնով հաշտութեան խօսքը իրանց շրթունքների վրա, այլ ցոյց տալու, հաստատելու թէ ո՛ր կողմն է մեղաւոր, և հետևաբար ո՛ւմը պէտք է խաչ հանել։

Կարծես թէ բաւական չէ արդէն մի տարվայ մահացու թշնամութիւնը, միմեանց հալածելու, միմեանց նախատելու, միմեանց դատապարտելու ապարդիւն ու անմիտ կատաղութիւնը, այժմ, որպէս այդ բոլորի լուսապսակ, ուզում են միմեանց ուղարկել պաշտօնապէս, հանդիսաւորապէս մեղադրանքի ու դատապարտութեան հազուագիւտ նուէրներ։

Իսկ մենք աղաղակում ենք. ո՛չ, բաւական է։

Հարցը այն չէ, թէ ո՛վ է մեղաւոր, որովհետև այժմ ամեն ինչ ակի պէս յայտնի է, այլ մտածեցէք թէ ի՛նչ պէտք է անել, վերջապէս, որ հետքն անգամ չը մնայ այս աներևակայելի գժութիւնը, որ վերջապէս սրբվեն այդքան ամօթանքն ու այդքան արցունքները...

Տ. Զաւէն

ԿՌԻՈՂ ԱԶԳԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ

Պ. Ա—Դօն «Մշակի» № 29-ի մէջ յարձակվում է այն «շատ» հայերի վրա, որոնք մի տարվայ շարունակվող սարսափների տակ «յուսահատ» յայտարարում են իբրև հիմնական միջոց երկու կռւող ազգերի բաժանումն միմեանցից։ Նա ասում է, որ երկու ազգերը միմեանցից ջոկելը, նրա տեսակէտով, ցանկալի չէ, և գտնում է, որ դա հնարաւոր էլ չէ։

Այս բոլորից յետոյ նա յանկարծ աւելացնում է. «Մտածեցէք, պարոններ, միջոցներ, դրանք միջոցներ չեն. այդպիսի կարծիքի համար մեզ Եւրոպայում կը ծաղրեն»։

Որովհետև ես էս այդ հարցի առիթով «Մշակի» № 9 մէջ յայտնել եմ իմ կարծիքը և գտնում եմ, որ կռւող ազգերի միմեանցից մասնակի բաժանումը միակ և անհրաժեշտ միջոցն է երկիրը խաղաղացնելու և տևողական խաղաղութիւն պահպանելու, այդ պատճառով աւելորդ չեմ համարում պատասխանել պ. Ա—Դօին։

Պ. Ա—Դօն մեր լրագրական ասպարիզում համակրելի գործողներից մէկն է և այդ պատճառով ինձ զարմացրեց նրա այդ ոչ-լուրջ վերաբերմունքը դէպի մի հարց, որը մեզ համար այնքան կենսական նշանակութիւն ունի։ Պ. Ա—Դօի ասելով այդ հարցը երկար ժամանակ «փսփսոցով» էր յայտնվում միմեանց ականջին, քննութեան առարկայ էր դարձել «կօմպետենտ» շրջաններում և լրագիրներում յայտարարվում է իբրև միակ հիմնական միջոց երկիրը խաղաղացնելու։ Թւում է թէ մի այդպիսի հարց արժանի էր աւելի լուրջ վերաբերմունքի, քան այն «շպրտոցը», որին արժանացել է նա պ. Ա—Դօի կողմից։

Դժբաղդաբար պ. Ա—Դօն պարզ չէ ասում թէ՝ ինչու նա անհամակրելի է համարում անջատման հարցը։ Եթէ միայն այն պատճառով, որ դա «հնացած տեսակէտ է»—դա համոզիչ չէ կարող լինել, որովհետև կան շատ հին տեսակէտներ, որոնք նորերից թէ բարձր են, թէ համակրելի։

Չենք հասկանում նոյնպէս թէ ինչու պ. Ա—Դօի կարծիքով Եւրոպան կը ծաղրէ մեր կարծիքը բաժանման հարցի վերաբերմամբ։ Մենք գիտենք հակառակը, որ Եւրոպան միշտ ցաւ է յայտնել, որ մեր ցրված և ուրիշ ազգերի հետ խառն ապրելու շնորհիւ՝ անհնարին է դարձել մեր դրութեան բարելաւումը։ Առհասարակ ազգերի գոյութեան հարցում—նրանց եթէ ոչ միապաղաղ, գոնէ մեծ տոկոսային կացութիւնը—համարվել է բոլոր ազգերի կողմից և բոլոր ժամանակներում ամենաանհրաժեշտ պայմանը։ Եւ այդպիսի տեսակէտ մարդիկ ունեն աւելի կուլտուրական, աւելի խաղաղ կացութիւնների վերաբերմամբ և ոչ թէ մեր դժոխային կացութեան, որը նման է գազանանոցի, ուր չը կայ ոչ բանականութիւն, ոչ որոշ հասարակական յենակէտներ, ուր թագաւորում է սանձարձակ կամայականութիւնը և ուր կեանքը դարձել է շնորհիւ մեր դրացիների անարդարութեան ու զրպարտութեան—ճահիճ և գազանային սպանդանոց։

Ո՛չ, Եւրոպան մեզ չի ծաղրի. նա շատ լաւ է հասկանում, որ պէտք է գազաններից հեռու լինել, եթէ չես ցանկանում վառօդի ծխով շրջապատվել և խեղդվել այդ ծխի մէջ։

Մեր դրացին ուզում է թալանել, ստրկացնել, բնաջինջ անել մեզ։

Մեզ մեղադրում են, որ մենք շահագործում ենք մեր հարևանին, որ մենք սահմանափակում ենք նրա քաղաքացիական իրաւունքները։

Անմիտ մեղադրանքներ։

Բայց մեր արդար բողոքը, մեր վիճակագրական ապացոյցները և անվերջ հիմնաւոր բացատրութիւնները չազատեցին մեզ այդ հրէշաւոր ամբաստանութիւններից։ Մեզ չեն հաւատում, մեզ չեն ուզում հաւատալ։

Եւ այդ զրպարտութիւնները յամառ կերպով պտտվում են մեր շուրջը միայն այն հանգամանքի շնորհիւ, որ Թուրքը ապրում է մեզ հետ միասին։

Թուրքի հարևանութիւնը մեզ դատապարտել է կոտորածի և աւերութեան։

Ինչու, ինչ է տալիս մեզ այդ հարևանութիւնը, որի համար արժենար յանձն առնել այս դժոխային կացութիւնը, այս կոտորածն ու աւերութիւնը։

Իմ կարծիքով Թուրքի հարևանութիւնը մեզ համար ամեն տեսակէտից բացասական է ու վտանգաւոր. կարելի է զարմանալ, որ մեր մէջ գտնվում են մարդիկ, որոնց համար ցանկալի չէ համարվում ազատվել այդ դրացիութիւնից։

Եթէ այդ դրացիութիւնը ցանկալի է նկատվում տնտեսական տեսակէտից—դա մի տխուր թիւրիմացութիւն է, որովհետև ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Թուրքը միշտ (և ոչ միայն վերջին տարին) եղել է մեզ կողոպտողը, մեզ թալանողը և իր աւազակային բնազդների շնորհիւ երկիրը պահել է այնպիսի վայրենի պայմանների մէջ, որոնք հնարաւորութիւն չեն տալիս մեզ զարգացնել տնտեսական շատ շահաւէտ ճիւղեր։

Քաղաքակրթական տեսակէտից—տարօրինակ է անգամ խօսել մեր Թուրք դրացիների օգտաւէտութեան մասին. Նրանք իրանց յետամնացութեան շնորհիւ կարող էին միայն խանգարել առաջադիմութեան գործը։

Գուցէ ոմանց համար ցանկալի է մեր դրացիութիւնը Թուրքերի հետ ընդհանուր մարդկութեան կուլտուրայի տեսակէտից,—բայց դա մի անարդար պահանջ է դէպի հայ ազգը, որի 83% անգրագէտ է և որը ոչ մի իրաւունք և հնարաւորութիւն չունի այդ տեսակ բարձր կոչումներ ստանձնելու։

Ի՞նչ տեսակէտից ուրեմն մեր դրացիութիւնը կարող է ցանկալի լինել Թուրքերի հետ։

Ուրիշ բան է հողերի փոխանակութեան դժուարութիւնը։ Այս հարցը արժանի է լուրջ ուշադրութեան և նրա վրա պէտք է ծանրանան մեր բոլոր ջանքերը, որովհետև այս հարցի բաւարար լուծումից է կախված բաժանման խնդրի գործնական իրականացումը։

Հողերի փոխանակութեան հարցը դժուար և լուրջ հարց է, բայց անհնարին չէ, ինչպէս կարծում է պ. Ա-Դօն։ Անհնարին չէ այն պատճառով, որ հէնց այս րօպէիս շատ գիւղեր՝ թէ հայկական և թէ թուրքական բոլորովին դատարկվել են և այդպիսով ազատվել են հայկական մասերում Թուրքերի հողաբաժինները և թուրքական մասերում հայերի հողաբաժինները։ Հարկաւոր է աշխատել ստանալ կառավարութեան համաձայնութիւնը փոխանակութեան վերաբերմամբ—և հեշտ կը լինի համաձայնութեան բերել շահագրգիռ կողմերը։

Մեր կարծիքով այն խաղաղարար համագումարը, որը հաւաքվելու է Փոխարքայի դիւանատան կից—գլխաւորապէս պէտք է զբաղվի այս հարցով, որովհետև սկզբունքի և խաղաղացման տեսակէտից՝ երկու կռւող ազգերի մասնակի բաժանման հարցը—այն միակ յենակէտն է, որի վրա պէտք է հիմնէ խաղաղարար համագումարը իր զբաղմունքները։

Հարցի գործնական, իրականացման հնարաւորութեան մասը միայն կարող է վիճաբանութեան առարկայ լինել. դրա մասին մենք մի ուրիշ անգամ կը խօսենք աւելի մանրամասն։

Այժմ միայն հանգստացնում ենք պ. Ա-Դօին, որ մենք չենք առաջարկում մաքրել ամբողջ գաւառներ և նահանգներ Թուրքերից, այլ առաջարկում ենք հեռացնել հայերին այն տեղերից, որտեղ վերջիններս գտնվում են վտանգաւոր կացութեան մէջ, շրջապատված լինելով բազմաթիւ Թուրք գիւղերով և նոյնը անել Թուրքերի համար, որոնց դրութիւնը վտանգաւոր է բազմաթիւ շրջապատող հայ գիւղերի շնորհիւ։

Տեղափոխութիւնը և հողերի փոխանակութիւնը այդպէս հասկանալով,—մենք համոզված ենք, որ գործը հնարաւոր է և բոլորովին անհրաժեշտութիւն չի զգացվի երկու միլիօն ժողովուրդ միմեանցից բաժանել, ինչպէս ենթադրում է պ. Ա-Դօն, այլ գուցէ դրա միայն 6—7 տոկոսի փոխադրութեան հոգսը լինի մեր գործը։

Եթէ ժողովուրդների այդ տեսակ տեղափոխութիւնը ներկայացնում է մեծ զոհաբերութիւն և տնտեսա-հասարակական բռնադբոսիկ փոփոխութիւն—այնուամենայնիւ անհրաժեշտ է այդ միջոցին դիմել, որովհետև ուրիշ ոչ մի միջոց չը կայ երկիրը խաղաղացնելու։

Կառավարութեան թնդանօթները գուցէ կարողանան զսպել կռւող կողմերին, բայց այդ կը լինի ժամանակաւոր խաղաղութիւն, մինչև մի նոր Գօլիցինի կամ Նակաշիձէի երևան գալը։ Իսկ մենք չենք կարող և չը պէտք է ուզենանք մեր գոյութեան ապահովութիւնը կախված տեսնել այդ տեսակ երերուն պատահարներից։

Ներկայ պատմական ճգնաժամը պահանջում է մեզանից և որոշ բացառիկ միջոցներ ու զոհաբերութիւններ, որոնք ապահովեն մեզ ապագայում խաղաղ ու պատուաւոր կեանք։

Մ. Շ.

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԱՌԻԹՈՎ

Եթէ այս համագումարն էլ մի նոր ծաղր չէ դէպի Թուրք-հայկական արիւնալի դրաման, եթէ մի Թունաւոր կատակ չէ ուղղված դէպի մոխրակոյտ դարձած բազմաթիւ հայ և Թուրք գիւղերը, եթէ իրօք անկեղծ և ճշմարիտ ցանկութիւն կայ դադարեցնելու հայ-Թուրքական ընդհարումները, եթէ մեր իշխանութիւնների համար թանգ արժէ մեր փարթամ երկրի բարօրութիւնն ու նրա ժողովուրդների կուլտուրական բազմապիսի պահանջները, նրա կեանքի և գոյքի ապահովութիւնը—ապա այդ առիթով մի երկու խօսք կուզենայինք ասել—անկեղծ ու շիտակ, գրված մեր հայրենիքի սիրուց և երկու հարևան ազգերի համերաշխութեան գաղափարից, համերաշխութիւն, որից կարող է բղխել միայն երկու ազգերի համար լուսաւոր և գեղեցիկ ապագայ...

Շատ, շատ է խօսվել հայ-Թուրքական կոտորածների մասին՝ միտինգներում, ժողովներում, մասնաւոր շրջաններում և շատ, շատ է գրվել թէ ռուսաց, թէ հայոց, թէ վրաց և թէ Թուրքաց լրագիրներում, ինչպէս մայրաքաղաքի և արտասահմանեան մամուլում։

Նրանց իւրաքանչիւրին վերադառնալն աւելորդ է և աննպատակ։

Մի բան միայն պարզ է և ճշմարիտ, որ բոլոր միտինգների ռէզօլիւցիաները, մեր բազմաթիւ ժողովների եզրակացութիւնները, տեղական և գաւառական պատգամաւորութեան դիմումները 12 երկար ամիսների ընթացքում մնացել են ձայն բարբառոյ յանապատի։

Ինչու։

Յանուն մեր երկրի ընդհանուր շահերի, յանուն երկու արիւնլայ ազգերի բարօրութեան, պիտի այդ ահաւոր «ինչու»-ին պատասխանել անկեղծ և համարձակ, որովհետև մինչև այժմ այդպէս է հաճելի եղել իշխանութիւններին, որովհետև Թուրք-հայկական ջարդերի պատճառն ու հեղինակը եղել է հին րէժիմի մեր բիւրօկրատիան և բիւրօկրատիայի ցանկութեամբ և օգնութեամբ կարելի է վերջ դնել այդ արիւնալի, անմիտ դրամային, որ միլիոնաւոր վնասներ է տուել պետութեան, որ նիւթապէս իսպառ քայքայել է երեք անգին նահանգներ, որը տուել է անթիւ մարդկային անմեղ զոհեր և կենդանի մնացածների մի զարհուրելի թշուառ բազմութիւն՝ աղքատ, քաղցած, ծարաւ, աղի արտասուքով նստած հայրենի մոխրակոյտերի վրա...

Հարցնում ենք հրապարակով. մինչև այժմ իշխանութիւնները վճռական քայլ արեցի՞ն զարհուրելի ջարդերին վերջ տալու, ջարդեր, որ այնպիսի խայտառակ էջեր բացեցին ռուսաց պատմութեան համար.—երբէք և ոչ մի ժամանակ։

Թէ ինչու, ժամանակ չէ և անօգուտ է այժմ լուսաբանել այդ դիւային տարտարոսը, միայն կսկծալի իրողութիւնն ու փաստը այն է, որ անցեալ փետրվարի 6-ից մինչև այսօր այդպիսի վճռական ու շիտակ քայլ չէ արված։

Փաստեր—ինչքան կամենաք. Նրանք անթիւ են և անհամար, նրանք ապշեցուցիչ են և արտասուելի, նրանք սոսկում են ազդում ոչ միայն քրիստոնեային, այլ և հեթանոսին։

Արդ՝ ցոյց տուէք մի դէպք, երբ իշխանութիւնը կանգնէր երկու հարևան ազգերի մէջ տեղը և հրամայաբար ու վճռաբար պահանջէր վերջ դնել այդ ամբողջ երկիրը քար ու քանդ անող կռւին և երկուսի ձեռքերին էլ խլէր եղբայրասպան զէնքը։

Չէր կարող, ոյժ չունէր. ո՛ր միամիտը կը հաւատայ այս ծիծաղելի առարկին, թէև այս էլ մարդուս խելագարութեան հասցնող փաստ է, որ իշխանութիւնները շատ անգամ են անխղճօրէն դրանով արդարացել։

Ապա ռուսական մեծ ու ահաւոր յեղափոխական շարժումը, որ վարակել է լայնածաւալ պետութեան բոլոր ծայրերն ու անկիւնները, մեծամեծ քաղաքներն ու զանազան գիւղերը։ Ինչպէս այդ հսկայական շարժումը խորտակելու համար գտան և՛ ոյժ, և՛ զօրք, և՛ թնդանօթ։—Որովհետև դա կառավարութեան սրտի խոցն էր, դա նրա փայփայած գաղափարն էր։

Հարցնում ենք հրապարակով. անցեալ փետրվարի 6-ից մինչև այսօր հայ-Թուրքական կոտորածների անխիղճ ագիտատօրներից, յայտնի ոճրագործներից և աւազակներից քանի՞սին բանտարկեցին, քանի՞սին աքսորեցին, քանի՞սին արդարացի կերպով կախաղան բարձրացրին։

12 երկար ամիսների ընթացքում գուցէ միայն 12 հոգի և գուցէ միայն 12 օր են պահել բանտում, այնպէս՝ ի ցոյց մարդկանց, իսկ յետոյ ազատել մարդասպաններին. իսկ աքսորելու և կախաղան բարձրացնելու ոչ մի դէպք չէ եղել, հակառակ ժողովրդի աղերսներին և խնդիրներին։

Ինչու. որովհետև այդ է պահանջել հնացած կարճամիտ բիւրօկրատիայի շահը, նրա հայատեաց քաղաքականութիւնը։

Եւ այսօր մեր անխորտակելի համոզումն է, որ եթէ մեր կառավարութիւնն անկեղծ կերպով ցանկանայ, Թուրք-հայկական կոտորածներին վերջ կը դրվի ամենաշատը մի շաբաթում։ Հարկաւոր է միայն արդար, անաչառ հրամանը։

Այս անգամ գոնէ յուսանք և հաւատանք, որ Փոխարքայի դիւանատան կից գումարվելիք խորհրդակցութիւնը կը գայ այն միակ եզրակացութեան, որ հայ-Թուրքական ջարդերի լուծումը կարող է տալ միայն կառավարութիւնը և իր անկեղծ, շիտակ, վճռական քայլով կռւող երկու կողմերին էլ լսելի կանէ իր հզօր ձայնը—ես ցանկանում եմ, որ այսուհետև լինի խաղաղութիւն։ Ինչպէս խաւար Պարսկաստանի Միապետը իր ֆանատիկոս հպատակներին հրամայեց—ես չեմ ցանկանում, որ իմ հպատակ հայերի և ոչ մէկի մազին դիպչեն, և հակառակ մօտ անձնաւորութիւնների բուռն ջանքերին և խորհրդաւոր ագենտների բոլոր խլրտումներին—այնպէս էլ եղաւ։ Մահմեդական, ֆանատիկոս Պարսկաստանում ոչ ոք չը համարձակվեց անմեղ հայի մազին կպչել, որովհետև այդպէս էր նրա Միապետի անկեղծ և անխախտ կամքը։

Յուսանք ու հաւատանք, որ այդքան անմեղ արիւնահեղութիւնից յետոյ, մեր սիրուն ու գեղեցիկ երկիրը տնտեսապէս քայքայվելուց յետոյ—գոնէ այժմ այդպէս լինի և մեր, կառավարութեան կամքը։

Արշ. Յարութիւնեան

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հեղինակաւոր գրող պ. Թէզի հաւաքել է մի քանի հետաքրքրական փաստեր կեանքի ապահովագրութեան վերաբերեալ, որից պարզ երևում է թէ քաղաքականութիւնը որչափ մեծ դեր է խաղում այդ խնդրում։ Ապահովագրվել ցանկացողների մէջ կան բաւականին թւով թագակիր անձեր և քաղաքական գործիչներ։ Առաջին օրինակը տուեց Վիկտօրիա թագուհին՝ ապահովագրելով իրան 60,000 ֆունտով։ Նրա որդին հետևեց նոյն օրինակին և անգլիական ներկայ թագաւորը ապահովագրել է իրան ¾ միլիոն ֆունտով։

Ամենախոշոր գումարով ապահովագրվել էր Հումբերտ I թագաւորը։ Նրա որդին ստիպված էր բաւականանալ նոյն ապահովագրութեան կէսով չափ միայն, որովհետև հօր ողբերգական մահը աւելի զգոյշ դարձրեց ապահովագրական ընկերութեանը։ Վիլհէլմ II կայսրը ապահովագրել է իրան կէս միլիոնով։ Ռումինիայի թագաւորը և իր կինը ապահովագրվել են անգլիական հաստատութիւնների մէջ մի քանի միլիոն ֆրանկով։ Ասենք՝ այդ թագաւորը իր բոլոր խնայողութիւնները Անգլիա է ուղարկում։ Նրա կարծիքով այնտեղ աւելի ապահով է։ Մի ժամանակ շատ էին խօսում ֆրանսիական Եւգէնիա թագուհու բանակցութիւնների մասին ապահովագրական ընկերութիւնների հետ, բայց նրանք ոչ մի րօպէ չէին ուզում համաձայնութեան գալ։

Իսպանիական Ալֆօնս XII թագաւորը իրաւունք ունէր դժգոհ լինելու ապահովագրական ընկերութիւններից։ Այս վերջիններից ոչ մէկը չը վստահացաւ նրան ապահովագրել, երկիւղ կրելով եղերական պատահարներից, որոնց մասին նախազգուշակում էին իսպանական անիշխանականները։

Բաղդաւոր վիճակի մէջ չէին և սերբիական թագաւորները։ Միլան թագաւորը ամեն տեղ մերժում ստացաւ։ Նոյն բաղդին արժանացաւ և նրա որդի Ալէքսանդրը։ Աւստրիական ապահովագրական ընկերութիւնները բաւականաչափ տեղեակ էին թէ ինչպիսի աւազի վրա է դրված սերբիացոց Ալէքսանդր թագաւորի գահը։

Պետրոս թագաւորը պէտք է համոզվէ, թէ որքան քիչ է հաւատ ընծայում Աւստրիան նրա թագաւորութեանը, որովհետև նա չէ ապահովել իր զաւակներին սև օրվայ համար։

Իշխան Օբոլենսկին ունեցաւ իր տխուր փորձը։ Երբ նա, դիմելով աւստրիական ապահովագրական ընկերութիւններին, խնդրեց ապահովագրել մահվան դէպքի համար, հետևեալ պատասխանը ստացաւ. — եղերական մահվան համար չէ վարձատրվում։ Նրա նախորդի եղերական մահը վատ նախազգուշակ եղաւ։

Առհասարակ ռուսաց պետութեան գլուխ կանգնած բարձրաստիճան անձինք իրանց համարում են բօյկօտի ենթարկված եւրոպական ապահովագրական ընկերութիւնների կողմից։ Այդ գործին մասնակցողներից մէկը պատմում է մի շատ բնորոշ փաստ. ազատամիտ բարձրաստիճան անձինք դիւրաւ կարողանում են գտնել ապահովագրական մի որ և է ընկերութիւն, որ յանձն առնէր ապահովագրելու իրանց, մինչդեռ րէակցիօներ մինիստրները և նրանց օգնականները չեն կարողանում գտնել այդ տեսակ մի ընկերութիւն ոչ Աւստրիայում և ոչ էլ Անգլիայում։

(«К. О.»)

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Հաջիգարա, (Էջմիածնի գաւառ), փետրվարի 8-ին։ Հասարակական զանազան հարցերը բոլորովին մոռացութեան են տրված ընդհանրական ահաւոր աղէտի դիմաց, որը առաջացրել է ներկայումս կեանքի, մահվան խնդիր դարձած ինքնապաշտպանութեան խոշոր հարցը և որը հրամայողական պահանջ է ընդհանուր հայ ազգաբնակութեան համար թէ քաղաքային և թէ գիւղական։ Քաղաքներում, ի հարկէ, նա աւելի ամուր հիմքերի վրա է դրված և այնտեղ պայմանները խիստ նպաստաւոր են գիւղերից. պատճառն այն է, որ այդ գործի ղեկավարող գլխաւոր օրգանիզացիաները հաստատված են քաղաքներում, նրանց մօտ պակասում է գիւղական կեանքի զանազան երևոյթների մանրազննին լուսաբանութիւնը, որն աւելի քան կարևոր և անհրաժեշտ է նրանց համար՝ այս գործը գիւղերում էլ ամուր հիմքերի վրա դնելու։

Իսկ գիւղական կեանքի մասին պարզ և իսկական որոշ գաղափար կարող են տալ մամուլի մէջ աշխատակցող այն անհատները, որոնք իսկապէս գիւղացի են, բաժանում են գիւղական կենցաղավարութեան բոլոր հանգամանքները և որոնք շատ հազւադէպ են մեր գիւղական մոռացված խուլ անկիւններում։

Գիւղացին ընդունակ չէ քննադատական աչքով նայելու կեանքի վրա, չը նայած, որ նրա մարդկային անբռնաբարելի իրաւունքները ոտնակոխ են լինում ոչ թէ միայն օտարազգիներից ու կառավարութեան րէժիմից, այլ նաև հէնց իրանց գիւղի մէջ, իրանց յարկի տակ, իրանցից ուժեղ հայ դրացիներից, սակայն նրանք երկար դարերի ընթացքում ընտելացած լինելով այդ կացութեանը, նրանց մէջ խոր արմատ է գցել ստրկական ոգին և ինչ զարմանք, որ ներկայ դարուս ազատագրական շարժումը ուղղակի ծաղր է թւում այդպիսիների համար, այն ինչ նրանց շատ ու քիչ ըմբոստ ոգի ներշնչելու գաղտնիքը հէնց այդ ներքին, տիրող րէժիմի տապալման մէջ է...

Գիւղերում ոյժը օրէնք է և իրաւունք՝ բառիս բուն նշանակութեամբ, այդ պատճառով էլ այստեղ խիստ զարգացած են՝ ցեղային ու զանազան բարեկամական համախմբումները, որոնց մէջ անխուսափելի է մէկի թեականի գերազանցութիւնն ու անհանդուրժելի բռնաւորութիւնը, և որովհետև ամեն մի գիւղ ունի իրան համայնական ներքին կառավարութիւնը, որը կենտրոնացած է լինում այսպիսիների ձեռքում, նոյնպէս սրանցից է ընտրված լինում կամ թէ չէ սրանց ազդեցութեան տակ են լինում իշխանութեան միակ ներկայացուցիչները (տանուտէրները, գզիրները, ջրպետները և այլն)։

Եւ որովհետև գիւղացիները առհասարակ տնտեսական աւելի բարդ հանգամանքներով են կապված միմեանց հետ և նրանք իրանց շահերով ու ընթացիկ կեանքով յաճախակի շփման մէջ են և երբ նրանք իրանց տգէտ և կոպիտ հասկացողութիւններով դեռ երկար դարեր չեն կարող յարգել համերաշխութեան, մարդասիրութեան և ճշմարտութեան վեհ սկզբունքները, հասկանալի է, որ այդ հանգամանքներում արդէն ոտքի տակ կոխած են այդ համախմբումներից դուրս մնացող, բարեկամ չունեցող խեղճ անձնաւորութիւնները, որոնք միանգամայն իրաւազուրկ մարմիններ են և ձայները խեղդված ընդմիշտ։

Այս տեսակ գերիշխող կողմերի սարսափը այնքան մեծ է լինում միւս թոյլերի վրա, որ նրանք յաճախ դողալով ապագայ վրէժխնդրութիւնից, չեն վստահանում նոյն իսկ իշխանութեան դիմել։ Կամ եթէ բացառիկ դէպքերում բողոքում են էլ, ոչինչ չեն կարողանում հաստատել, որովհետև բազմաթիւ ականատեսներից ոչ մէկը չի համարձակվի վկայութիւն տալ, հակառակորդի ամենակարող զայրոյթը շարժել։

Իսկ ընդհակառակը, հարկաւոր դէպքում իրանց բարեհաճութեամբ, նրանք իրաւացի թէ անիրաւացի, իշխանութեան միջոցով պատժել կարող են տալ իւրաքանչիւրին, որովհետև օրէնքը հիմնվում է միայն վկաների վրա, իսկ այդ կողմից արդէն նրանք հարուստ են։

Իսկ երբ հաւասարակշռութիւն է լինում երկու այսպիսի կողմերի մէջ, այն ժամանակ արդէն թշնամութեան և ընդհարումների նիւթը ծառայում է գլխաւորապէս եսականութիւնը և փոխադարձ կրքերի գրգռումը, որովհետև թայֆայական հարստահարութիւնները այս դէպքում միւսի կողմից արգելքի են հանդիպում։

Ուրեմն այս բոլորից յետոյ պարզվում է մի բան, թէ որքան անհրաժեշտ է ինքնապաշտպանութեան համար մեր ժողովրդին զինելը, նոյնքան և անհրաժեշտ է ամեն կերպ աշխատել միանգամայն վերացնել այդ խայտառակ ճնշողութիւններն ու բռնութիւնները, ու կռւել թայֆայութեան դէմ, այլապէս ինչպէս զինել այն ժողովրդին, որի իրան առաջին թշնամին ճանաչում է իրան ճնշող դրացուն։

Ցոլակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 19-ին, կիրակի օրը, նշանակված է Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որի ժամանակ հարց է յարուցվելու կովկասեան Փոխարքային խնդրամատոյց լինելու համար, որպէս զի ընկերութեան նախկին կանոնադրութիւնը, որ հաստատված էր 1881 թւականին կովկասեան փոխարքայութեան նախկին պաշտօնակատար իշխան Մելիքօվի միջոցով, վերստին գործադրվի։

—

Ներսիսեան դպրոցի այրված շինութիւնը Սալդատսկի բազարում, որ ապահովագրած էր կրակի դէմ, ապահովագրական ընկերութեան որոշման համաձայն ստանալու է 45,000 ռ.։

—

Լուր է ստացվել, որ Երևանում ամսիս 16-ին վախճանվել է բժ. Լևոն Տիգրանեանը։ Հանգուցեալը յայտնի էր իր հասարակական և գրականական գործունէութեամբ։ Նա վարել է Երևանում քաղաքագլխի պաշտօն, հրատարակել է «Բժշկարանը» և «Առողջապահական թերթը»։ Հանգուցեալը մի ժամանակ աշխատակցում էր մեր թերթին։

—

«Нов. Об.» թերթի խմբագիր հրատարակիչը միջնորդութիւն է յարուցել հաստատելու նոյն թերթի խմբագրի պաշտօնի համար պ. Նէմիրօվիչ Դանչէնկօյին։

—

Կովկասեան Փոխարքան հաստատել է Դաղստանի վիճակի տեղական մուսուլմանների մէջ լուսաւորութիւն տարածող ընկերութեան կանօնադրութեան ծրագիրը։ Այդ ընկերութեան նպատակն է առհասարակ նպաստել վիճակի տեղական մուսուլման ազգաբնակութեան մտաւոր զարգացմանը և տարածել նրանց մէջ գործնական գիտելիքներ։

—

Կովկասի Փոխարքայի ամուսինը, կոմսուհի Ե. Ա. Վօրոնցօվա-Դաշկօվան նուիրել է Թիֆլիսի մանկաբարձուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան մանկաբարձական տան օգտին 100 ռուբլի։

—

Սակաւահող գիւղացիների դրութիւնը բարելաւելու համար կազմված մասնաժողովի նախագահ է նշանակված երկրագործութեան և հողաբաժանութեան մինիստրութեան կառավարչի կովկասեան լիազօր Ի. Ա. Մեդվեդեվը։ Նախագահի հրաւէրով մասնաժողովին մասնակցելու են երկրագործութեան պաշտօնեաները, հաշտարար միջնորդները և գիւղական կեանքին և կարիքներին մօտ ծանօթութիւն ունեցողները։ Նիստերին մասնակցելու համար հրաւիրվում են նոյնպէս կովկասեան զանազան ազգութիւնների ներկայացուցիչները, ի միջի այլոց՝ Ա. Ա. Քալանթար, Ա. Ս. Փիրալեան, Ա. Նաւրօզով և Ի. Օ. Իոսսէլիանի։

—

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսի պարսկական ընդհանուր հիւպատոսի պաշտօնը ներկայումս վարում է Իսմայիլ-խանը, որն առաջ Բաքւում փոխ-հիւպատոսի պաշտօն էր վարում, իսկ վերջին անգամ Պետերբուրգի հիւպատոսարանի առաջին քարտուղարն էր։ Մեր պաշտօնական աղբիւրներից ստացած տեղեկութիւնների համաձայն՝ Թիֆլիսի ընդհանուր հիւպատոս նշանակվում է Մուֆախ-Բամէ-Սուլթանը, որը ներկայումս Կալկաթայի պարսկական կառավարութեան ներկայացուցիչ է (Վեքիլ-ըր-Մուզիմ) և որի գալուստը սպասվում է Թիֆլիսում, մօտաւորապէս, այս տարվայ մարտի 10-ին։ Բացի այդ՝ մեր ստացած տեղեկութիւնների համեմատ՝ նոր հիւպատոսը բարձր կրթութիւն ստացած անձն է և նրա եղբայրն էլ ներկայումս Վիէննայի պարսկական դեսպանն է։

—

Պարսկական արտաքին գործերի նախարար Մուշիր-Դովլէն ուղարկել է 1700 ռ. Թիֆլիսի պարսկական հիւպատոսարանին՝ բաժանելու Կովկասի այն պարսիկներին, որոնք Թուրք-հայկական ընդհարման ժամանակ վնասվել են։ Յիշեալ գումարը ուղարկված է պետութեան գանձարանից և յանձնված է ներկայումս շէյխ-ուլ-իսլամին՝ կարգադրելու ըստ իր հայեցողութեան։ Պարսկական հիւպատոսարանի հաւաքած պաշտօնական տեղեկութիւնների համաձայն՝ Թուրք-հայկական ընդհարման ժամանակ ընդամենը 51 պարսիկ են սպանվել, այն ինչ «Իրշադ» լրագիրը հրատարակել էր, դիտմամբ ի հարկէ, որ սպանվածների թիւը հասնում է 400 հոգու, թէպէտ ամեն տեսակ միջոց ունէր իր տեղեկութիւնը հիմնել պաշտօնական աղբիւրների վրա։ Բոլոր՝ նոյն իսկ այսօրվայ պարսկական կեանքից մեր հաղորդած տեղեկութիւնները՝ «Իրշադում» հրատարակվել են յեղաշրջած ձևով։

—

Ժամանակաւոր գեներալ-նահանգապետը առաջարկել է քաղաքագլխի պաշտօնակատարին շտապեցնել զինապահների գիշերապահութիւն մտցնելու գործը Թիֆլիսում։

—

Փետրվարի 8-ին Կուրսկի նահանգում կալանաւորվել է զեմստվօյի յայտնի գործիչ, Սուջանի վարչութեան նախագահ իշխան Պետրոս Դօլգորուկօվ։ «Ծայրահեղ» կուսակցութիւնը ջարդելուց յետոյ՝ պ. Դուրնօվօն սկսեց հետամուտ լինել խաղաղ սահմանադրական-ռամկավարներին, որից յետոյ հերթը, ի հարկէ, կը հասնի և պ. Շիպօվին և առհասարակ բոլոր նրանց, ովքեր չեն ուզում ճանաչել Վիտտէ-Դուրնօվօյի երկպետութիւնը իբրև հայրենիքի փրկարար։ Մինչև անգամ Պլէվէն չը կարողացաւ հեռացնել Դօլգորուկօվին վարչութեան նախագահի պաշտօնից և անկարելի համարեց կալանաւորել նրան։ Սակայն այժմ փոխվել է ժամանակը և «ամեն բան թոյլատրված է», և այն, որը չէր յանդգնում անելու նոյն իսկ ամենազօր Պլէվէն, թոյլ է տալիս իրան Կուրսկի նահանգապետը։

—

Կուրսկի նահանգի Սուջանի գաւառում գիւղացիները ինքնակամ պաշտօնանկ են անում համայնական տանուտէրներին և դատաւորներին և նշանակում նրանց փոխարէն նորերին. հարկերը չեն վճարում։ Ոստիկանութիւնն որոնում է ագիտատօրներին, բայց գիւղացիները խիստ խնամքով թաքցնում են նրանց։ Ամենայն օր նոր նոր զօրքեր են ուղարկվում։

«Н. Ж.»

—

Մեզ հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կարգադրութեամբ յունական լեզուի համար քննութիւնները գիմնազիայի VIII դասարանում վերացվում են։ Այդ կարգադրութիւնը վերաբերում է նոյնպէս էքստերներին, որոնք հասունութեան վկայական ստանալու համար քննութիւն են տալիս։

—

Վերջապէս երկար քաշքշուկներից և փարիսեցութիւններից յետոյ մեր շաքարավաճառները կամաց կամաց պակասեցնելով շաքարի գինը, ներկայումս պուդը սկսել են վաճառել 6 ռ. 30—40 կ., որպիսի գնով նրանք կարող էին շատ վաղուց վաճառել։ Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ Ռուսաստանի գործարաններում շաքարի պուդը արժէ 4. ռ. 60 կ., ամենաշատը 5 ռ., այնպէս որ Թիֆլիսում հեշտութեամբ կարող են շաքարը ծախու հանել ներկայումս պուդը 6 ռուբլով և մինչև անգամ պակաս, բայց այստեղ էլ շահասիրութիւնը իր դերն է կատարում և ընդհանուրի շահերը մասնաւորին են զոհ գնում։ Բացի շաքարի գինը իջնելուց—երկաթուղու կանոնաւոր գնացքները բացվելով՝ իջել են և մի քանի միւս առարկաների գները—օրինակ նաւթը՝ տուն հասցնելով պուդը արժէ 1 ռ. 40 կ., իսկ պահեստներում 1ռ. 10—20 կ., գարին, որ առաջ 1 ռ. 5 կ. էր պուդը, այժմ արժէ 65 կ., պակասել են 40% գներում նոյնպէս խոտը և զարմանը։ Պարեղէններից այս տարի թանգ է՝ լոբին, որի լաւ տեսակի պուդը արժէ մի ռ. 80 կ., բրինձը աջուլա՝ I տեսակի պուդը-4 ռ. 20 կ., Երևանի շիբրախանի՝ ձէթը ֆունտը 30 կ. տեղական՝ Տօլլէնը 20—22 կ. ֆ., ձիթապտուղը-20 կ. ֆունտը, ջոնջոլը 8—10 կոպ.

—

Թիֆլիսի պօստ-հեռագրատան ծառայողներից ներկայումս բանտարկված են 12 հոգի՝ որպէս գործադուլի բիւրօյի անդամներ։ Դրանցից 4-ը հայեր են, այն է պ. պ. Տէր-Իսրայէլեանց, Շահիկեանց, Ալիխանեանց և Միրզոեան, իսկ մնացեալ ութ հոգին վրացի և ռուս։ Յամառ լուրերին նայելով՝ սոյն փետրվարի 19-ին սպասվում է քաղաքական յանցաւորներին ընդհանուր ներման (ամնիստիա) հրովարտակ։ Եթէ այդ բարեբեր լուրը ստուգվի, երևի բանտարկվածներից շատերը, դրանց թւում և վերոյիշեալ ստորիճանաւորները, ազատութիւն կը ստանան։

—

Հացավաճառները քաղաքումս շարունակում են իրանց կամայականութիւնը բնակիչների հետ և հացի առատութեան կարգի դնելու խնդիրը օրվայ չարիք պէտք է համարել։ Համոզվելու համար՝ թէ հացթուխները իրանց քէֆի ուզած գներով են վաճառում թխած հացը, բաւական է յիշել, որ ներկայումս մեր հաւաքած ամենաճիշտ տեղեկութիւնների համեմատ օրինակ, Հավլաբարում, թոնրի հացը ծախվում է ֆունտը 4 կոպէկով, այն ինչ նոյն հացը, մինչև անգամ յատկութեամբ աւելի ցածր տեսակի, միւս թաղերում, օրինակ 9-րդ, 10-րդ, 8-րդ և այլ քաղաքամասերում հացթուխները վաճառում են ֆունտը 4½ կոպ.։ Ներկայումս ալիւրի պակասութիւն կամ թանգութիւն չը կայ, ամեն օր հազարաւոր սոմար ալիւր է ներմուծվում քաղաքս Կերչից, Րօստովից և այլ գիւղերից. համարձակ կերպով վերոյիշեալ տեսակի հացը կարելի է ծախել 3½ կոպէկով, բայց շնորհիւ անտէրութեան, արհեստական բարձր գներն են տիրում և ժողովուրդը, մանաւանդ խեղճ ժողովուրդը, իր դառն վաստակից աւելորդ կոպէկները ստիպված է թափել մի քանի շահամոլների գրպանները։ Հացի և նման անհրաժեշտ մթերքների սակագին նշանակելը քաղաքային կարգադրութեամբ վերապահված է քաղաքային ինքնավարութիւններին, հետևապէս քաղաքային վարչութիւնը ծանր պատասխանատուութիւն է ընդունում իր վրա այս կենսական և կարևոր հարցը անհոգ թողնելով և խիստ կարգ ու կանոնի տակ չը դնելով։

—

Հայ աղէտեալների օգտին ստացանք՝ 1) Լուգանսկից—Մուրադեանց եղբ. 5 ր., 2) Րոստովից—Պ. Սախաւովից 3ր., 3) Նալչայի բանւոր դասակարգից 55 ր., 4) Կարսից—Խ. Ղորխմազեանի միջոցով Վարդանանց տօնի յիշատակին ժողոված 12 ր. 45 կ., 5) Պետրովսկից—Աւետիս Մելքայէլեանից ամսական վճար 15 ր., 6) Սլավիանսկից (Խարկովի նահանգ) եղբ. Տէր-Յովհաննիսեաններից 25 ր., 7) նոյն տեղից — Մ. Յարութիւնեան և Ա. Հախվերդեանի միջոցով ժողոված 81 ր. 50 կ., 8) Մարիուպոլից— Յ. Կարինեանցի միջոցով ժողոված 113 ր. 62 կ., 9) Բաթումից — Յ. Մարութեանցի նշանադրութեան ժամանակ Ա. Խօջամիրեանցի միջոցով ժողոված 16 ր., 10) Երևանից—Տ. Ֆէշտմալչեանից 100 ր., 11) Իւզովկից—Աղեկեանց քահանայի միջոցով 311 ր. 25կ., 12) Ղզըլ-Արվատից — Մարկոս քահ. Տէր-Մկրտչեանի միջոցով հաւաքած Ա. Ասլանեանցի տանը մկրտութեան ժամանակ 22 ր. 50 կ., 13) Բագուից—Յ. Տէր-Դաւթարեանցի միջոցով ժողոված 28 ր., 14) Բագուից—Սաթենիկ Թաւրիզեանցի նշանադրութեան հանդէսում Ա. Տէր-Աստուածատրեանի միջոցով հաւաքած 21 ր.:

Այս փետրվարի 20-ին պէտք է իմացվի թէ ագրարային շարժումները ինչ գումարի վնասներ են տուել Ռուսաստանին: Մայրաքաղաքի լրագիրների ասելով վնասի գումարը անագին է, միայն Կուրսկի նահանգում վնասը հասցրած է 2,800,000 ր., Օրլովսկի նահանգում ոչնչացրած է $1\frac{1}{2}$ միլիոնի կալւածներ և 200,000 րուբլու անտառ է կտրտած, Սարատովի նահանգում 18 կալւածատէրերին հասցրած է 1 միլիոնի վնաս և 450,000 ր. անտառ է կտրտած: Լուրերին նայելով, ընդհանուր վնասը կը հասնի 60 միլիոնի:

Ինչպէս յայտնի է՝ իր ժամանակ պօստ-հեռագրատան գլխաւոր վարչութեան կառավարիչ Սեվաստիանովի պաշտօնից հեռացնելու մասին շատ էր խօսվում ներկայումս, իբրև լուր լրագիրները հաղորդում են, որ նա փոխվում է և նրա տեղ նշանակվում է Պսկովի նահանգապետ կոմս Ասլերբերգը:

Ակցիօներական ընկերութիւնները վերջին անկարգութիւններից ստացել են 20,000,000 րուբլու վնաս: Ինչպէս յայտնի է «Մշակի» ընթերցողներին, քաղաքային խորհրդի մէջ ոստիկանութեան խնդրի կանոնաւորելը մի քանի անգամ քննութեան առարկայ է դարձել և այս խնդրի մասին քաղաքային խորհրդի նախնթաց նիստում որոշ վճիռ կայացաւ: Այժմ մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ոստիկանութեան խնդիրը Պետերբուրգում ևս քննութեան առարկայ է դարձել: Այսպէս օրինակ ներքին գործերի մինիստրութեան յանձնարարութեամբ՝ ոստիկանութեան դեպարտամենտը ներկայումս մշակում է կանոններ՝ ոստիկանների կազմը բարեփոխելու և ոստիկանական ծառայութիւնը կարգի գցելու վերաբերմամբ: Ի միջի այլոց որոշված է բարձր ոստիկանական պաշտօնների համար նշանակել բարձր կրթութիւն ստացած մարդկանց, կամ այնպիսի սպաներ, որոնք 6 տարի զօրքի մէջ ծառայել են: Բացի այդ, ռոճիկներ աւելացնելու խնդիրը ոստիկանների՝ արդէն առաջադրած է Պետական Խորհրդի տեսութեան:

ՂԶԼԱՐԻՑ մեզ գրում են. «Երէկ, փետրվարի 10-ին, տեղիս հայոց ծխական դպրոցի վերին յարկի դահլիճում կայացաւ հայ սիրողների ընտանեկան ներկայացումը: Դահլիճը լիքն էր հիւրերով: Դրվեց Շիրվանզադէի «Պատւի համար» պիեսան: Խաղը շատ թոյլ անցաւ և տպաւորութիւն չը թողեց. մինչև անգամ տեղ-տեղ ձանձրոյթ էր պատճառում: Աւելի ճիշտ կը լինէր, եթէ ասէինք կարդացին և ոչ թէ ներկայացրին: Անտեղեակ հասարակութեան առանց այն էլ չը զարգացած ճաշակը հարկաւոր չէ կաշկանդել: Վերջին ժամանակներս մեր սիրողները աշխատում են լուրջ պիեսաներ տալ հասարակութեան. դա շատ գովելի է, միայն այդ իրագործելու և ցանկալի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որ գործողներն էլ ու նրանց վերաբերմունքն էլ դէպի գործը լուրջ լինեն, վայրի ի վերոյ չը լինեն: Ցանկալի էր, որ իւրաքանչիւր նոր երեկոյթին բեմի վրա նոր նոր «սիրողներ» չերևան, որոնք ստիպում են յօնքերի տակից նայել իրանց խաղին: Դա միայն ցոյց է տալիս, որ սիրողները իրանք իրանց նշանակութիւնը թոյլ են ըմբռնում: Այդ է պատճառը, որ տեղացիներից ՝նրանք, որոնք գիտեն գնահատել թատրօնը, ամենևին չեն յաճախում սիրողների ներկայացումները, այն ինչ եկւոր դերասանների երեկոյթներում միշտ կարելի է նրանց տեսնել: Հարկաւոր է սիրողներին կազմակերպվել, ունենալ մի կարգին զարգացած մարդ բեմիսեօրի պաշտօնում և, որ գլխաւորն է, չը դադարել ինքնազարգացութեամբ պարապելուց, որովհետև մեր սիրողները, բացի սիրողներ լինելուց, Ղզլարի հասարակութեան ընդհանուր գործիչներն էլ են, իսկ այս դերը չափազանց պատասխանատու է Ղզլարի առանց բացառութեան սակաւակիրթ երիտասարդների համար: Այս դէպքում տեղիս ծխական դպրոցների ուսուցչական խումբը կարող էր գործունեայ աջակցութիւն ցոյց տալ մեզ»:

ՄՇԱՐԱ գիւղից (Սուխումի շրջան) մեզ գրում են. «Այսօր, Վարդանանց տօնին, պատարագից յետոյ կատարվեց հոգեհանգիստ բոլոր նահատակվածների համար և ապա ուսումնարանում կայացաւ աշակերտական հանդէս, որին ներկայ էր գիւղի երկսեռ խուռն բազմութիւնը. պատմական ակնարկով խօսվեց Վարդանի ժամանակի մասին՝ համեմատելով մեր կարմիր օրերի հետ: Երկսեռ խումբը, որ բոլորովին նորութիւն էր այստեղ, երգում էր ազգային երգեր, արտասանվեցին ոտանաւորներ որոնք մեծ ոգևորութիւն պատճառեցին հանդիսականներին: Գեղեցիկ տպաւորութիւն թողեց մի փոքրիկ աշակերտի արտասանած «Հայերիս Թուք»:

Վարշավայից հեռագրում են «Руск. Сл.» լրագրին, որ Պրիվիսլեանսկի երկաթուղիների կառավարիչը փետրվարի 11-ին ատրճանակի հարուածով սպանված է: Սպանողը անյետացել է:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սպանիա:—Մադրիդի պաշտօնական լրագիրը «La Gaceta» հրատարակել է արքայական մի հրովարտակ, որ թոյլատրում է «Իբերո-Ամերիկեան Միութեան» կազմակերպել մի միջազգային ցուցահանդէս, Մադրիդում, 1908 թւին: Այդ ցուցահանդէսը միայն ամերիկական հանրապետութիւնների համար է:

—Սպանիայում, ներկայումս օրվայ չարիքը՝ միլիտարական (զինւորական) հարցն է: Միլիտարիզմը օրէցօր աճում է: Ալկօ քաղաքում տեղական գարնիզօնի օֆիցէրները ձերբակալեցին մի անպիտան լրագրի տնօրէնին, որովհետև այդ լրագիրը հայհոյել էր զօրքը: Գիժօն քաղաքում տեղական մի լրագիր սաստիկ յարձակումներ էր տպել զօրքի դէմ: Օֆիցէրները պահանջեցին, որ մամուլը դատի ենթարկվի և քննիչ դատաւորը շտապեց հրահանգներ տալ նրանց պահանջին: Բարքասրո քաղաքում զօրքի հրամանատարը ձերբակալելու տուեց առանց դատարանին դիմելու մի հակամիլիտարական բրօշիւրի հեղինակին, որ գրգռել էր նորակոչներին զինւորութեան չը գնալ: Քաղաքացիական իշխանութիւնները, փոխանակ բողոքելու, որ հրամանատարը ինքն է դատաւոր անում, գտաւ նրա այդ կարգադրութիւնը օրինաւոր:

Սենատում ներկայումս քննվում է մի օրինագիծ, որի համաձայն հայրենիքի և զօրքի դէմ գործված յանցանքները պէտք է ենթարկվեն զինւորական դատարանի քննութեան:

Ջանքեր են լինում հաշտութեան մի բանաձև գտնելու միլիտարիստների և քաղաքացիական իշխանութեան կողմնակիցների մէջ:

Իտալիա: Հեռագիրներից արդէն գիտենք, որ Իտալիայում նորերս Ֆորտիսի մինիստրութիւնը ընկաւ և նրա տեղ անցաւ Սոննինօյի մինիստրութիւնը: Սոննինօն իր քաղաքական անցեալով պէտք է որ կազմէր աւելի մի աջակողմեան կաբինէտ, բայց նա կազմեց կօալիցիօնական մի մինիստրութիւն: Այդ կազմի մէջ կան աջակողմեան հակա-պաշտպանողականների բէակցիօներների կենտրօնի, արմատականների և նոյն իսկ հակապետականների ներկայացուցիչները: Մինիստրների մեծամասնութիւնը՝ միջակութիւններ են, ինչպէս տնտեսագէտ Լիւցցատին, որ գանձի մինիստր է, Ալֆիէրի Բուչէլլի, որ մի միջակ և երիտասարդ գրող է և դարձել է պօստ-հեռագրի մինիստր և Գուիչչիարդինի, արտաքին գործերի մինիստր, որը թէև լիբերալ և նշանաւոր մի ազնուական է, բայց արտաքին քաղաքականութեան հարցում դեռ ոչ մի ընդունակութիւն և ձիրք չէ ցոյց տուել: Պէտք է այս էլ ասել, որ արտաքին քաղաքականութեան հարցում արտաքին գործերի մինիստրը անկախ չէ, որովհետև այդ քաղաքականութեան ղեկավարը ինքը թագաւորն է և մինիստրը միայն Կվիրինալի կամքի կատարողն է հանդիսանում: Իտալական թագաւորի այժմեան քաղաքականութիւնը, ինչպէս յայտնի է, կայանում է նրանում, որ նա մի ոտքով յենվում է երեքպետեան դաշնակցութեան վրա, իսկ միւս ոտքով՝ Ֆրանսիայի և Անգլիայի վրա: Որոշակի յայտնի չէ դեռ, թէ նրա սիրտը ինչպէս որի համար է բաբախում:

Իտալական մամուլն ևս երկու մասի է բաժանվել: Մի մասը ընդունեց նոր մինիստրութիւնը հիացմունքով, միւս մասը՝ բուռն և սաստիկ յարձակումներով: Բոլորին անակնկալ էր և այն, որ «Ավանտի» սօցիալիստ կուսակցութեան պաշտօնական օրգանն է, յայտարարեց իրան մինիստրութեան գրեթէ պաշտպան: Նրա խմբագիր-տնօրէնը, պ. Ֆէրրի իր յօդւածներում հասկացրեց, որ եթէ մինիստրութիւնը գործէ, ինչպէս հարկն է, նա կաջակցէ նրան բառ ամենայնի:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ երբ Կրիսպին հասաւ իշխանութեան, բոլոր սրտերը լցվեցին յուսով. նա ձախակողմեան մարդ էր և նրանից սպասվում էին մեծ ռեֆօրմներ: Եւ սակայն նա տուեց Իտալիային արկածներով լի և մի յետադէմ կառավարութիւն: Ներկայ մինիստր-նախագահ աջակողմեանից է. արդեօք նա Կրիսպիի հակառակը կանէ: Կը տեսնենք:

Թիւրքիա և Պարսկաստան.—Կ. Պօլսից «Courrier de Soophia» թերթին հաղորդում են, որ Թիւրքիայի և Պարսկաստանի զինված ընդհարման հնարաւորութիւնը դեռ ևս բոլորովին չէ հեռացրված: Բարձրագոյն Դուռը անպատասխան թողեց պարսից դեսպան Միրզա-Րիզա-խանի երկրորդ առաջադրութիւնը, իսկ երրորդին միայն բերանացի կերպով Բարձրագոյն Դուռը յայտնել էր պարսից դեսպանութեան առաջին դրագոման Միրզա-Օհանէս-խանին, որ մինիստրների խորհուրդը կը քննէ շահի ներկայացուցչի նօտայի բովանդակութիւնը այն ժամանակ, երբ կը ստանայ տաճկական զօրքերի գրաված, վիճելի տեղը ուղարկված մասնաժողովի մանրամասն զեկուցումը: Այդ նօտայով պարսկական դեսպանը ոչ մի պահանջ չէ յայտնում, այլ, նախ և առաջ, խնդրում է ընդունել Ռուսաստանի և Անգլիայի միջնորդութիւնը վիճելի հարցը լուծելու համար:

Ապա նա Բարձրագոյն Դրան ուշադրութիւնն է հրաւիրում այն հանգամանքի վրա, որ պարսկական սահմանագլխի գրաւումը, իրանց գլխաւոր կենտրօններով—Նախիջևան և Պերիէ, տաճկական զօրքերով վիրաւորական մի կոչ է շահի կառավարութեան համար, որը հարկադրում է նրան մեծ ծախքեր անել զօրաժողովի համար: Մի և նոյն ժամանակ Տաճկաստանի քիւրդերը միանում են պարսկականի հետ. որպէս զի ընդհանուր ոյժերով յարձակվեն Ադրբէջանը աւերելու համար, որտեղ լուրջ կերպով կարող են վնաս կրել ոչ միայն Պարսկաստանի շահերը, այլ և Ռուսաստանի ու Անգլիայի: Սակայն Թիւրք կառավարութիւնը լսել անգամ չէ ուզում Ռուսաստանի և Անգլիայի միջնորդութեան մասին, զարմանք ազդելով դիպլօմատիական շրջաններում իր խիստ վարմունքի համար Պարսկաստանի վերաբերմամբ, որի միակ յանցանքը, գուցէ կայանում է նրա մէջ, որ նա չը ենթարկվեց Իլդըզ-Քեօշքից եկող պանիսլամիստական պրօպագանդային, և թոյլ չը տուեց քրիստոնեաների կոտորած առաջ բերելու իր մօտ, և ընդհակառակը հրամայեց ընդունել փադիշահի առաջարկած ծառայութիւնը՝ վերակազմել պարսկական զօրքը Տաճկաստանի ծրագրով և տաճկական գեներալների շտաբի սպաների ղեկավարութեամբ:

Թիւրքիա.—Սուլթանը բացարձակապէս մերժել է որ և է միջնորդութիւն Ժօրիսի համար. վճռական պատասխան է տուել Բելգիայի դիմումներին:

—Ռուսաստանի մահմեդականները՝ դժգոհ՝ մեծ թւով գաղթում են խալիֆի երկիրը: Սուլթանը իր անհուն հոգածութեամբ դէպի հօտը, բանակցել է Բաղդադի երկաթուղու գերմանական վարչութեան հետ, որպէս զի այդ թանկագին գաղթականներին տեղ յատկացվի երկաթուղու շուրջը: Երկաթուղու վարչութիւնը սիրայօժար կատարել է Վիլհելմի եղբօր ցանկութիւնը:

Բելգիա. — Էմիլ Վանդերվելդ, բելգիական սօցիալիզմի պարագլուխներից մէկը, հարցապնդում է առաջադրել Կօնգօյի պետութեան մասին բելգիական պառլամենտում: Բուռն յարձակվում է գործել Լէօպօլդի անխիղճ շահագործութեան սիստէմի դէմ Կօնգօյում, արձագանք տալով վերջերս մամուլի մէջ եղած գայթակղեցուցիչ մերկացումներին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 փետրվարի: Բարձրագոյն հաստատված է Պետական Խորհրդի այն կարծիքը, թէ պէտք է փոխել՝ քաղաքացիական իշխանութիւններին աջակցելու համար զօրք հրաւիրելու կանոնները: Պետական Խորհուրդը համամիտ է այն բանին, որ քաղաքացիական իշխանութիւնները զօրքի գալստեամբ պարտաւոր են վերջին յորդորը կարդալ, և ապա արդէն լիազօրութիւն տալ զօրքին: Երբ զինւորական մասի կառավարիչը անհրաժեշտ է գտնում զէնք գործածել, ամբոխին պէտք է զգուշացնել երեք անգամ, որից յետոյ, եթէ անկարգութիւնները շարունակվեն, զէնքի գործադրելը ոյժի իսկական գործադրութեան նշանակութիւն պէտք է ունենայ, և ոչ թէ երկիւղ տալու: Պետական Խորհուրդն հարկաւոր գտաւ արգելել դէպի վեր արձակել, որովհետև վերև արձակելը չէ սարսափեցնում ապստամբներին, բայց կարող է վնաս պատճառել կողմնակի մարդկանց, նոյնպէս հարկաւոր ճանաչեց արգելել արձակելու դատարկ փամփուշտների դիմելու անհրաժեշտութիւնը, որովհետև դատարկ փամփուշտներով արձակելու արգելքը կը սովորեցնէ ազգաբնակութեան տեսնել զօրքի մէջ մի սոսկալի ոյժ, և ոչ միայն երկիւղ տալու միջոց, այլ և կը կորչի ամբոխի կողմից զօրքի վրա յարձակման երկիւղը: Այս բոլոր ենթադրութիւնների համաձայն անհրաժեշտ համարվեց, կարգի պահպանութեան և անկարգութիւնները զսպելու ժամանակ, ըստ կարելոյն աւելի քիչ զոհ տալու տեսակէտից, արձակելն արգելելու դէպի վեր՝ դատարկ փամփուշտներով: Միաժամանակ հրատարակված են զօրքի, միայն անհրաժեշտ դէպքում, կանչելու կանոնների մասին, նոյնպէս կառավարութեան զօրքի յետ կոչման գործունէութեան պայմանների մասին:

Կայսրի նախագահութեամբ կայացաւ մինիստրների խորհրդի և Պետական Խորհրդի անդամների երկրորդ խորհրդակցութիւնը: Արդէն վերջացված է Պետական Խորհրդի նախագծի և Պետական Խորհրդի կանոնների քննութիւնը: Նախագիծը ընդունված է աննշան փոփոխութիւններով և մօտ օրերս կը հրատարակվի: Աչքի առաջ ունենալ որ մախօրկի ակցիզը աւելացնելու է, մարտի 13-ին գումարվելու է գործարանատէրերից և ապրանքատէրերից մի խորհրդակցութիւն՝ քննելու համար ֆինանսական մինիստրութեան նախագիծը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Արդարադատութեան մինիստրութեան առաջին վարչութեան տեսուչ Շչէգլօվիտօվը նշանակվում է արդարադատութեան մինիստրի օգնական:

ԼՈՆԴՈՆ: Րէյտերը հաղորդում է, որ մօտ ապագայում պէտք է կայանայ Էդուարդի տեսակցութիւնը Վիլհելմի հետ, հաւանօրէն ծովի վրա:

ԱԼԺԵԶԻՐԱՍ: Խմբագրական մասնաժողովը փետրվարի 10-ին քննեց Մարոկկօյի բանկի ծրագիրը. Քննվեցին խնդիրներ, որոնց վերաբերմամբ համաձայնութիւնը հեշտ է: Վէճ կէտերի քննութիւնը յետաձգված է:

ԲԵԼԳՐԱԴ: Սկուպչինան որոշեց պահանջել կառավարութիւնից չը կնքել Աւստրո-Ունգարիայի հետ ոչ ժամանակաւոր, ոչ մշտական դաշնագիր, առանց նախնապէս համաձայնեցնելու անասնաբուժական դաշնագրի հետ: Կառավարութիւնն ընդունեց Սկուպչինայի վճիռը և յայտնեց դեսպանին Վիեննայում վերնորոգել բանակցութիւնները: Այսօրվանից առևտրական յարաբերութիւնները Աւստրո-Ունգարիայի հետ այլ ևս չեն կանոնաւորվում ոչ մի դաշնագրով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Պետական Տնտեսութեան դեպարտամենտում քննված է զինւորական մինիստրութեան առաջադրութիւնը պետական գանձարանից 7,000,000 րուբլի բաց թողնելու կօզակների տնտեսութիւնը պահպանելու համար: Պետական Խորհրդի մէջ մամուլի մասին կազմված ժամանակաւոր օրէնքների քննութեան շարունակութիւնը նշանակված է շաբաթ օրը: Ներքին գործերի մինիստրութիւնը համաձայնութիւն է տուել կալմիկների ուսումնարանները ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ դնելու, որը մինչև այժմ չէր ենթարկվում նրան:

ԲԱԳՈՒ, 17 փետրվարի: Թիֆլիսում շուտով կայանալու է թուրք-հայկական խաղաղարար անդամների ժողովը երկիրը խաղաղացնելու համար: Համաժողովի վրա մեծ յոյսեր են դնում, կարծում են, որ առանց կառավարութեան անշահ աջակցութեան ու վերաբերմունքի դէպի բոլոր ազգութիւնները, առանց իշխանութեան օրինական և ուժեղ միջամտութեան, անկարելի է խաղաղութիւնը վերականգնել:

ՎԻԼՆԱ, 16 փետրվարի: Ռուս ազգաբնակութիւնը խնդրամատոյց է եղել թոյլատրելու, որ իր կողմից Դումայի համար առանձին անգամ ընտրվի ռուսական շահերը երկրի մէջ պաշտպանելու համար: Գեներալ-Նահանգապետը, արդարացի համարելով այդ միջնորդութիւնը, պաշտպանում է:

ՇԱՆԽԱՅ, 17 փետրվարի: Չինական ազգաբնակութիւնը առայժմ խաղաղ է տրամադրված, բայց միւս կողմերից, դէպի օտարերկրացիները թշնամական յարաբերութեան մասին ստացված տեղեկութիւնների պատճառով հետզհետէ սկսվում են խլրտումները: Փետրվարի 11-ին օրը խաղաղ անցաւ, թէև սպասում էին, որ կը սկսվի կոտորածը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը որոշել է հանդիսաւոր ընդունելութիւն ցոյց տալ պատերազմի դաշտից վերադարձող Նովօչերկասկի գնդին, որի համար յատկացված է 4000 րուբլի: Վերաբացված սահմանադրական-ռամկավար կուսակցութեան կենտրօնական բիւրօն երէկվանից արդէն փակված է Պետերբուրգի քաղաքապետի կարգադրութեամբ:

ՓԱՐԻԶ, 17 փետրվարի: Անգլիական թագաւորը ծպտված կերպով, Լանքաստերի դուքս անունով, ճանապարհորդում է և էգուց երեկոյ գալու է Փարիզ, ուր մնալու է երկու օր: Թագաւորը կը իջևանէ անգլիական դեսպանատունը, և ճաշկերոյթ կը տայ ի պատիւ նախագահ Ֆալիէրի:

18 փետրվարի

ԼՈՆԴՈՆ, 17 փետրվարի: Համայնքների պալատում Դուկի հարցին—մտադիր է արդեօք կառավարութիւնը հրաժարվել շաքարի միջազգային կօնվենցիայից,—արտաքին գործերի մինիստրը պատասխանեց որ՝ «Մենք չենք կարող հրաժարվել կօնվենցիայից մինչև 1906 թ. սեպտեմբեր ամիսը: Հրաժարման ծանուցումը կը յայտարարվի 1907 թ. սեպտեմբերին. առայժմս կառավարութիւնը հարցը չէ քննել, որովհետև դեռ շուտ է»: Եապօնական իշխանութիւնների տրտունջների առթիւ, որ արգելված էր օտարերկրացիներին ափ իջնել Մանջուրական նաւահանգիստներում և ապրանքներ ուղարկել երկրի խորքերը, մինիստրն ասաց, որ ճնշիչ միջոցները համաձայն Եապօնիայի յայտարարութեան, հետևանք էին այն բանի, որ անհրաժեշտ էր տալ երկաթուղիները եապօնական զօրքի կարիքների համար: Ի նկատի ունենալով ուղղած նոր տրտունջները, Պէկինի բրիտանական դեսպանին պատուիրած է քննութիւն կատարել: Դեսպանը ուղարկել է վաճառականական գործակալին Նիւ—Չժուան: Րօբերտսօնի ծովապետութեան քարտուղարը պալատի քննութեանն առաջարկեց ծովային վարչութեան բիւջէտը: Նա յայտնեց, որ կառավարութիւնը գտաւ նրան համարեա պատրաստ և ընդունեց աննշան փոփոխութիւններով, նոյնպէս ընդունեց նաւատորմղի կազմակերպութեան ծրագիրը և վճռեց ծրագրի մանրամասնութիւնները քննել, բայց իրան է վերապահում ամեն կողմից հետևել, ցոյց տուեց, որ մարօկկեան ծովային վարչութիւնը նախագծում է բարելաւելու նաւաշինութեան գործը Պօրտսմուտում, աչքի առաջ ունենալով նաւերը զինել «Դրէդնօտ»-ի պէս և նոյն իսկ մեծ նաւերի տիպի նման: Ներկայ տարվայ ծախքի կրճատումը հազիւ թէ կարելի լինի պահպանել յետագայ ծախքերում: Միջին հաշւով կարելի կը լինի ծախսել՝ նոր նաւեր կառուցանելու համար $8\frac{1}{2}$ միլ. ֆրանկ օրական:

ՇԱՆԽԱՅ, 10 փետրվարի: Լրագիրները հաղորդում են չինական այրի թագուհու ծանր հիւանդութեան մասին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 փետրվարի: Լրացնում ենք Ցարսկօյէ-Սէլօում երէկ կայացած ժողովի հեռագիրը այն տեղեկութիւններով, որ քաղում ենք «Русское Государство» լրագրից: Պետական խորհրդին վերաբերվելիք որոշումների համար կը հրատարակվեն առանձին լրացուցիչ յօդւածներ: Պետական Դումայի մասին որոշումը կը հրատարակվի օրէնսդրական ձևով:

Այս օրէնքները քննվելու չեն Պետական խորհուրդում: Այսպիսի ակտեր միշտ կախում ունեն Նորին Մեծութեան կամքից անմիջապէս: Նոր կանօնների մէջ որոշվում է, որ ոչ մի օրէնք ընդունելի չէ առանց Պետական խորհուրդի և դումայի հաւանութեան: Խորհուրդի կազմի մէջ մտնում են անդամների հաւասար թւով, նշանակվելով ընդրեալ անդամներ ուղղափառ հոգևորականութիւնից, ազնուականութիւնից, զեմստվօից, գիտութեան ճեմարանից, առևտրի և արդիւնաբերութեան հաստատութիւններից: Խորհուրդը և Դուման գումարվում և փակվում են Կայսրի ցուցմունքներով: Երկու հաստատութիւններին էլ իրաւունք է տրւում կարծիքներ յայտնել գոյութիւն ունեցող և նոր հրատարակվելիք օրէնքների, բացի հիմնականներից—փոփոխման մասին: Խորհուրդին և Դումային իրաւունք է տրվում դիմել մինիստրներին ապօրինի գործողութիւնների մասին բացատրութիւն խնդրելով: Խորհուրդի և Դումայի նիստերը առհասարակ լինելու են հասարակութեան ներկայութեամբ: Առևտրի և արդիւնաբերութեան մինիստրութիւնների ժամանակաւոր կառավարիչ նշանակված է մինիստրի օգնական Ֆեօդօրօվը:

ԺԱՐԿԵՆՏ, 17 փետրվարի: Առաւօտեան 8 և 18 րօպէին երկրաշարժ զգացվեց:

ՎԱՐՇԱՎԱ, 17 փետրվարի: Վատիկանը մտադիր է պատգամաւորներ ուղարկել Լեհաստան, քննելու մարիավիտների աղանդը: Գեներալ Սկալօնը Զգէրշ է ուղարկել մի պաշտօնեայի՝ հետազօտելու համար տեղական մարիավիտների գործերը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱԻՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզատեռ. հ.
Յ. Մ. ՉԻՐՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի. ներքին և ներվային:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՁԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Պ. ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկահատ.:
Խ. Տ. ԳԱԲԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—$7\frac{1}{2}$ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիւմի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
Միևնոյն դագաղում
Պատկեր Բագուի կոտորածից ը. հրատարակութեամբ նահատակների երկու նկարով:
ԳԻՆԸ 7 ԿՈՊ.
Դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին: Հաւլաբար, Լազարևսկայա № 49:
Գումարով (առնուազն 100) գնողներին զեղչ 25—35%: Առանց կանխավճարի չը դիմել:
3—3

ՀԱՍՏԱՏ ԱՂԲԻՒՐԻՑ
նրանք, որոնք մատնացոյց կանեն, կը ստանան քառորդ մասը այն գումարի, որը կը վերադարձնվի: 1—3

ՃԵՐԱՄԻ ՍԵՐՄՆ
Առանձին խնամքով պատրաստված, Բաղդադի տեսակի, հետևեալ ամենայայտնի ֆիրմաների. 1) «Խ. Խrիստօդուլիդիս», 2) «Լ. Էֆօնօմիդիս» և 3) «Ա. Մառդիրիս», սրանցից առաջին երկուսը վաղուց մեծ անուն և հռչակ հանել են ինչպէս Թիւրքիայում՝ նոյնպէս և Կովկասում, Թիւրքեստանում և Պարսկաստանում:—Ցանկացողներին դիմել դրանց ներկայացուցիչ՝ պ. Վ. Յակոբեանին, Թիֆլիս, Նախկին Արծրունի գալէրէյում, թիւ 127 գրասենեակը: Հեռախօս՝ թիւ 608: (կ.հ.կ) 1—3

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանովի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տէլէֆօն № 791: (ա. օ.) 69—150

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտօվսկի և Պասկեվիչյա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 46—100

Բ Ժ Ի Շ Կ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 93—300

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բարիատինսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տէլէֆօն № 11.
(ա. օ.) 6—20

Բ Ժ Ի Շ Կ
Տ. Խախանեան
Ներքին, երեխայոց և վեներակ. հիւանդ.
Ընդունում է առաւօտ. 9—11, երեկ. 5—8, կիրակի օրերին միայն առաւօտը:
Վելեամինօվսկայա փողոց, № 22, Նաւտիկօվի տանը:
(չ. ու. կ.) 5—15

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդեան
Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 53—100

ՀՐԱՒԷՐ

Հաւլաբարի հայոց սուրբ Կարապետ եկեղեցու յարգելի ծխականներին խնդրում եմ գալ նոյն եկեղեցին այսօր, ամսիս 19-ին, ժամը 12-ին, 1905 թւի հաշւեմատեանը տեսնելու, սոյն 1906 թւի նախահաշիւը հաստատելու և բացվելի ծխական ուսումնարանի ու եկեղեցու բարեզարդութեան վերաբերեալ մի քանի հարցեր քննելու համար:

Երէցփոխան Գրիգոր Հախվերդեան
(հ. շ. կ.) 3—3

ԿԵՖԻՐ
Բժիշկներ Սօկոլետի, Գօտերստենի, Շմիտի, Բիլի և ուրիշ հետազօտութիւնից երևում է, որ կեֆիրը չափազանց նպաստում է կշռի աւելանալուն. կեֆիրը գործ է ածվում թոքերի հիւանդութեան, աղիքների կատառի, արեան պակասութեան, ջրջրուկի, (золотуха) ցալկահարութեան, ուժասպառութեան ժամանակ և առհասարակ լաւ ներգործութիւն է ունենում ջղերը հանգստացնելու վրա: Կարելի է ձեռք բերել Օ. Կօրօնայի գործարանում, Լօրիս-Մելիքեանի փող. սեմինարիայի դիմաց: Ցանկացողներին կարելի է ուղարկել իրանց բնակարանը:
(հ.կ.) 4—20

IX ԴԱՍԱՐԱՆ ԱՒԱՐՏԱԾ ՄԻ
Վարժուհի ցանկանում է պարապել փոքր դասարանի աշակերտների և աշակերտուհիների հետ ռուսերէնից, թուաբանութիւնից և հայերէնից: Հասցէն՝ Тифлисъ, Полицейская ул. д. Парешева № 30. կամ «Մշակի» խմբագրատանը: 2—3

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.:
Դիմել՝ «Գուտտէմբերգ» գրախանութը, Թիֆլիս. նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր: 13—15

Լոյս տեսաւ նոր գիրք
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի: Ձեռնարկ մայրերի և դաստիարակչուհիների համար. 77 երգ շարժական խաղերով. 112 օրինակներ աշխատանքի համար.—գինն է 3 ր. 10%—յատկացրված է հայ արկածեալների օգտին: Դիմել Թիֆլիս, Սօլօլակ, Պասկևիչի փողոց, № 13: (հ.կ.ե.) 10—29

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ
Բ. ԻՇԽԱՆԵԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ
(Արտատպած «Մուրճից»)
Օտար խօսքերի բառերթով, մօտ 80—90 երես, գինը 15 կօպէկ, քանակով գնողներին զիջում կը լինի:
Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրատունը, Գուտտենբերգ և այլ հայ գրավաճառանոցները: 8—5

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (ե.ո.) 43—25

Կենտրօնական գրավաճառանոցում
Թիֆլիսում վաճառվում են հետևեալ գրքերը.
Զմշկեան Մ. Տարեցոյց 1906 թւականին Քրիստոսի. գ. 30 կ.:
Սուվօրօվ պրօֆ. Ն. Եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները. թարգմ. պ. Տէր-Յարութիւնեան. գ. 30 կ.:
Սեյլեան. Նայթա Ֆիրատ. գ. 35 կ.:
Խատիսեան Մ. Նոր ճանապարհի վրայ. գ. 1 ր.:
Հայկունի Ս. Թագաւոր Լուսիկ և Սիրուն Հովիկ. գ. 25 կ.:
Մելիք-Կարագօզեան Գ. Մարդու կազմուածքը. գ. 60 կ.:
Նշտար. Ժահրոտ վէրքեր. գ. 15 կ.:
Եսայեան Յ. Միևնոյն դագաղում. գ. 7 կ.:
Մելիք-Հայկազեան Ն. Մի պտոյտ Ճապոնում. գ. 40 կ.:
Բեբէ. Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը. գ. 10 կ.:
Բուդուղեան բժ. Ա. Նուէր հայ զինւորներին. գ. 20 կ.:
Սուրխաթեան Յ. Մ. Մելքօն աղային վերջաբանութիւնը. գ. 20 կ.:
» Փարօսի վրա. գ. 5 կ.:
Մանեզգացցա Պ. Հիւանդ սէր. գ. 40 կ.:
Ծուղուրեան Յար. Խաճ. Գիւղի այրին. գ. 15 կ.:
Արղութինսկի-Երկայնաբազուկ. Մանկական պարտէզ, պատկերազարդ. գ. 3 ր., կազմած 3 ր. 60 կ.:

1896
ԾԱՂԻԿՆԵՐԻ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆ
ԲՐՕԿԱՐ և ԿՕՆ.
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Ամեն մրցութիւնից բարձր:
6—12 (ամ. 20)

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

(Ժամերը նշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Փօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 18 ր. գիշ.
Ալեքսանդրապոլից դուրս գալը	7 » 38 » եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալեքսանդրապոլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 31 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15